




ՀԱՅԵՆ ՏԵՐՏԵՐԵԸՆ

891.99.092 [Հրահանգային 1907 թ.]

ՅՈՎՀԱՆՆԷՍ

ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՍԻՐՈՅ ԵՒ ԿԱՐԵԿՑՈՒԹԵԱՆ ԵՐԳԻՉՂ

ԵՐԵՄՆԱՄԵԱՅ ՅՕՐԵՂԵԱՆԻ ԱՌԻԹՈՎ

1882—1912


(Յ. Յովնանյանի պատկերով)

ԵՐԵՒԱՆ

Տպարան «ԼՈՅՍ» Արշակ Յակոբյանի և Որդիք

1912






ՅՈՎՀԱՆՆԷՍ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻԻՆ

Ներածութիւն

- Գլ. I. Գեղազէտը.
» II. Նախորդ երգչին.
» III. Գեղեցիկը.
» IV. Սիրոյ երգեր.
» V. Կարեկցութեան երգեր.
» VI. Ռազմի երգեր.
» VII. Եզրակացութիւններ.
-



Ն Ե Ր Ա Պ Ի Թ Ի Ի Ն

Լրանում է Յովն. Յովնաննիսեանի գրական գործունէութեան երեսնամեակը:

Երեսուն երկար և ձիգ տարիներ հնչել է նրա քնարը, դաստիարակել մեր միտքն ու զգացմունքը, ամրապնդել մեր կամքն ու ձգտումները:

Եւ այսօր ձի է այն գրագէտ հայը, որ մի քանի կտոր անգիր չիմանայ նրա հոգեշունչ նւագներից. ձի է այն զեղասէր հոգին, որ իւր ուրախութեան և տրտմութեան վայրկեաններին չհնչեցնի նրա երգերից մէկը, իւր ձայնի դայլայլներով չմիանայ բանաստեղծի խորունկ ապրումներին:

Շատերը մեղանից դեռ դպրոցական նստարանի վրայ սիրել են նրան՝ բերան անելով բանաստեղծի գողտրիկ ոտանաւորները, որոնք անջնջելի հետք են թողել մեր հոգու վրայ մայրենի լեզուի առաջին անուշ թոթովանքների հետ միասին:

Հայ գրագէտներից քչերը չեն, որոնց ոճի վրայ խորապէս ազդել է մեր բանաստեղծի հոյակապ հայերէնը: Մեր նոր աշխարհիկ լեզուն, թող չափազանցութիւն չհամարւի ասել, դեռ իւր մանկութեան օրերն է ապրում, և ընական է, որ լեզուի այնպիսի մի վարպետ, որպիսին հանդիսանում է Յովնաննիսեանը, հա-

բըստացրել է նրա շտեմարանը իւր երեսնամեայ ստեղծագործութեան ընթացքում: Եւ, որ զլիաւորն է, նա ստեղծել է որոշ շէօլա, ունի իւր աշակերտները, որոնք խորապէս ազդելով իրենց շնորհալի ուսուցչից, գնացին դէպի առաջ և նորանոր նւաճումներ արին յօգուտ գեղեցկի դարգացման և գեղարւեստական ճաշակի խորացման մեղանում:

Հայ գրականութիւնը, ուրեմն, ամենայն իրաւունքով իւր յիշատակի արժանի վաստակաւորների շարքում պիտի դասի Յովհաննիսեանին, բաւականաւորով այն բոլորով, ինչ որ նա տւել է, առանց առտառոց պահանջների, թէ ինչո՞ւ նա այսքան է տւել և ոչ այնքան, ինչո՞ւ նա այսպէս է տւել և ոչ այնպէս: Այո, այդ տեսակ պնդումներ չպիտի անել շատ հասկանալի պատճառով: Ինչ որ և ինչպէս որ ստեղծագործել է մեր բանաստեղծը, անշուշտ, պայմանաւորւած է եղել որոշ պատճառներով և ահա պիտի հասկանալ տւեալը, հնարաւորութեան սահմանները, առանց խորթ, նրա տաղանդի հետ կապ չունեցող ոլորտներ թնակոխելու:

Այդ ասելով, ի հարկէ, մենք չենք ուզում պնդել, թէ աչք պիտի դոցել Յովհաննիսեանի թերութիւնների վրայ: Ամենեւին, մեր ասածից երբէք չի հետևում նման մի թիւրիմացութիւն: Մտնելով բանաստեղծի ստեղծագործութեան հարազատ մթնոլորդը, գիտակ դառնալով այն ուղիներին, որոնցով ընթացել է նրա տաղանդը, միաժամանակ մենք հնարաւորութիւն կունենանք շեշտելու և՛ նրա թերութիւնները, մինչև անգամ նեղանալով նրանից թէ ինչո՞ւ նա հաւատարիմ չի մնացել իւր կոչմանը և շեղել է իւր ընթացքը դէպի անհարազատ ճամբաներ:

Վերի տողերով մենք ուղեցանք միայն ասել, որ Յովհաննիսեանից խորթ պահանջներ չպիտի անել, այսինքն չպիտի պահանջել այն, ինչ որ յատուկ չէ նրա տաղանդին, հակասում է նրա գեղեցկի ոգուն: Այդ տաղանդն ու գեղեցիկ: հարազատօրէն հասկանալով միայն՝ մենք պիտի իրաւունք ունենանք պնդելու, որ նա հաւատարիմ մնայ հէնց իւր այդ տաղանդին և գեղեցկին, զոր չըրելով սրանց զարտուղի միտումների:

Յովհաննիսեանը մեզանում համարւել է «զուտ» գեղարւեստի «քուրմերից» մէկը: Այդ «զուտն» ու «քըրմութիւնը» խիստ առանձնայատուկ իմաստ են ունեցել մեր դրական ղեկավարների բառարանում:

Եւ Յովհաննիսեանը «զուտ» գեղարւեստի «քուրմ» լինելով՝ յաճախ ենթարկւել է անարդար գնահատումների: Ինչո՞ւ.— Որովհետեւ յիշեալ ղեկավարները «զուտ» գեղարւեստն այնպէս են հասկացել, թէ կեանքից կտրուած մի երևոյթ է հանդիսանում, «պառնասական մի ժամանց», որ երգել գիտէ սոսկ վարդ, աղջիկ, կորած սէր, սրտի վիշտ ..., իսկ կեանքի խորունկ ցաւերին ու այրող հարցերին անտարբեր է, անհաղորդ: Այս կերպ ստեղծւում է մի խոր վիհ, որ անջատում է կեանքը, սրա չարն ու բարին, լաւն ու վատը «զուտ» գեղարւեստի «քրմերի» ստեղծագործութիւնից: Ամեն մէկը գնում է իւր ճանապարհով և միմեանց չեն հասկանում. և, ի հարկէ, անսլայմանօրէն յաղթանակը կեանքին պիտի մնայ և «զուտ» քրմերը՝ տուժելու են՝ մոռացութեան մատնւելով կեանքի կողմից: Այստեղից հետեցրել են, որ «զուտ» գեղարւեստը իւր քրմերով անօգտակար է հասարակական զարգացման տեսակէտից, որովհետեւ կեանքի արձագանքը չլինելով, նա

միաժամանակ չի կարող նպաստել կեանքի առաջընթացին:

Եւ ընդհակառակը, այսպէս կոչւած, հրապարակախօս-բանաստեղծները նպաստում են կեանքի բարենորոգմանը՝ քարոզելով և կռւելով իրենց դաւանած հասարակական իդէալների օգտին. «նախ քաղաքացի և ապա պօէտ» — ահա նրանց առաջնորդող սկզբունքը:

Բանաստեղծ Յովհաննիսեանի ստեղծագործութիւնը հասկանալու համար մենք հարկաւոր ենք համարում այդ սկզբունքը վերլուծել և ցոյց տալ թէ նրա մէջ որքան ճշմարտութիւն կայ:

Խնդիրը աւելի պարզ ձևակերպելու նպատակով կարևոր ենք համարում մի անհատական օրինակի վրայ մատնանշել, որ այդ կողմից յարմարաւոր է և ուսանելի:

Դա հէնց ինքը բանաստեղծ Յովհաննիսեանն է:

Նրա մէջ քաղաքացին և պօէտը մի անդուստ պայքար են մղում միմեանց դէմ և յստակ կերպով ցոյց են տալիս, որ քաղաքացի և պօէտ դադարաւորները իրար չեն ծածկում, ազգակից և հոմանիշ հասկացողութիւններ չեն:

Քաղաքացի Յովհաննիսեանը մի չափազանց անհետաքրքիր դէմք է, մի մարդ, որ նայում է դէպի յետ և իւր հասարակական դադարաւորների սնունդը քաղում է ոչ նոր ժամանակների աղբիւրներից:

Բայց, ի հարկէ, նա մեզ այստեղ չի հետաքրքրում, որպէս հասարակական դարգացման երէկւան կամ վաղւան օրը ընդգրկող մի անձնաւորութիւն: Ո՛չ, Դրանով մենք չենք էլ հետաքրքրւում, կարևոր էլ չէ: Այստեղ

էականն այն է, որ Յովհաննիսեանը իբրեւ քաղաքացի ունի իւր ուրոյն առօրեայ շահերը, հասարակական համակրանքներն ու հակակրանքները, որոնք ներս են խուժում նրա բանաւ եղծութեան հոյակապ շէնքի մէջ և աղճատում վերջնիս գեղարւեստական հմայքն ու թովչութիւնը:

Սա մի պերճախօս փաստ է, որի հիման վրայ դիւրաւ կարելի է ապացուցանել «նախ քաղաքացի և ապա պօէտ» սկզբունքի կործանիչ ազդեցութիւնը գեղարւեստական ստեղծագործութեան համար:

Եթէ Յովհաննիսեանը իբրեւ քաղաքացի չափազանց «կարմիր» դադափարներէ տէր էլ լինէր հասարակական դարգացման տեսակէտից, — դարձեալ մենք կը մնայինք մեր կարծիքին, որ քաղաքացին — ուլ որ էլ լինի նա — չպէտք է իւր առօրեայ դատողութիւններէ պրօզան խոթի գեղարւեստական պատկերացումներէ և յուզական ասլոռմներէ աշխարհը:

Այստեղից ամենեւին չի հետևում, որ պօէզան երկնասլաց մի երևոյթ է, որի հետ կեանքը ոչ մի առնչութիւն չունի: «Զուտ» գեղարւեստի «քուրմն» էլ կեանքի մարդ է ճիշտ այնպէս, ինչպէս որ քաղաքացին. այն տարբերութեամբ միայն, որ առաջինն օժտւած է գեղարւեստական ձիրքով, իսկ երկրորդին պակասում է հէնց այդ ձիրքը:

Քաղաքացին, երբ որ սկսեց իւր առօրեայ շահերը պաշտպանել և այն էլ տաղանդով, շնորհալի կերպով — նա արդէն դառնում է ստեղծագործող. մի մարդ, որ կուի միջոցով պաշտպանում է իւր հասարակական նւաճումները և դրոհ է տալիս դէպի նոր նւաճումներ:

Մի խօսքով՝ նա դառնում է հրապարակախօս:

Պիտի ցաւել այն մարդկանց համար, որոնք ծըն-
ւած են իբրեւ բանաստեղծ, բայց չեն բաւականանում
այդ «Աստուածային ձիրքով», այլ թեւակոխում են իրենց
անհատական, առօրեայ, քաղաքացիական շահերի
պաշտպանութեան ուղին և կոչումով, տաղանդով հրա-
պարակախօս չլինելով՝ տալիս են ոտանաւորի ձևով
մնամէջ քարոզներ զուրկ բանաստեղծական ներշնչ-
չումից:

Յովհաննիսեանը ըռնել է այդօրինակ մի սխալ
ճանապարհ և իւր ստեղծագործութեան մէջ տեղ է
տւել հրապարակախօսական մօտիւնների:

Ի՞նչն է այդ երևոյթի պատճառը:

Մենք դժւարանում ենք որոշակի կերպով գըտ-
նել այն:

Գուցէ վաճառ, էջմիածնի մենաստանը, ուր նա
հարկադրւած է եղել տարիներ շարունակ գործել և եր-
բեմն երբեմն փոխանակ անսարկա իւր ներքին ձայնին,
ենթարկւել է սոսկ տեսածին ու լսածին, զոհ բերելով
և ներշնչում և սեպհական գեղեցիկը:


Գուցէ տաղանդի համեստ սահմանները, որոնցով
սահմանափակւած է եղել բանաստեղծը, և շատ ու շատ
ապրումներ չկարողանալով տեղաւորել այնտեղ, շեղել
է ճանապարհը և ընտրել պաղ դատողութիւնների
պրօզան:

Ինչ կուզէ լինի պատճառը, բայց այնուամենայ-
նիւ չի կարելի ժխտել, որ Յովհաննիսեանի ստեղծա-
գործութեան մէջ գոյութիւն ունի մի ներքին աններ-
դաշնակութիւն. քաղաքացու և պօէտի պայքարը նրա
հոգու մէջ առաջ է բերել ցաւալի հետևանքներ ի վը-
նաս բանաստեղծութեան և յօգուտ պրօզայիկ, քաղա-

քայրիական քարոզիների, որոնք աղճատում են նրա գեղարվեստական գոյությունը շէնքի ամբողջականութիւնը:

Պրոֆ. Պրախովը Էջմիածնում գտել էր մի գեղարվեստական սքանչելի նկար, որ տիրող աննպաստ պայմանների շնորհիւ ենթարկւած է հղել աւերի և մոռացութեան: Նա վերցրել է այդ նկարը, փոշիներից աղատել, մաքրել ու լւացել ...

Մենք չենք ուզում, ի հարկէ, որեւէ նմանութիւն դնենք Յովհաննիսեանի և այդ նկարի միջև: Բայց չենք կարող չարտայայտել մեր ներքին համոզումը. Յովհաննիսեան-քաղաքացին կադմակերպւել է Էջմիածնում և նրա ստեղծագործութեան վրայ իջել է մենաստանի հրապարակախօսութեան մղձաւանջը, որից անշատեւրով միայն՝ մեզ համար պիտի պարզւի նրա ստեղծագործութեան հարադատ պօէտիքական կերպարանքը, ազատ բռնադրօսիկ շպարներից, ազատ գեղեցկագուրկ ճիգերից և սնամէջ քարոզներից ...



Ա.

Պ Ե Ղ Ա Պ Է Տ Ը

Յովհաննիսեանը շատ ճիշտ կերպով է ըմբռնում իւր կոչումը։ Այդ այն ժամանակ է պատահում, երբ նա խօսում է իբրեւ բանաստեղծ, ի հարկէ, ոգևորւած և ներշնչուածով համակւած։

Իւրիյ Վեսելովսկուն մեր բանաստեղծը գրել է հետեւեալը. «Առանձնապէս իմ մասին կարող եմ հաղորդել, որ թէպէտ ինձ վրայ զօրեղ տպաւորութիւն արած առաջին բանաստեղծները Բայրընն ու Հէյնէն էին, սակայն յետոյ ես շատ սիրեցի Պուշկինին և Լերմօնտովին»։

Այս խոստովանութիւնը առանձնապէս նշանակալից է։ Ռուս բանաստեղծների մէջ Պուշկինն է, որ կլասիքական ձեւակերպութիւններ է տւել բանաստեղծի, աւելի ճիշտ՝ գեղազէտի կոչման մասին։ Յովհաննիսեանը իւր ուսուցչին չի դաւածանել այդ բաժնում։ Պիտի շեշտել այստեղ, որ բանաստեղծ Նադսօնն ևս դնացել է Պուշկինի շաւղով գեղազէտի կոչման ըմբռնումը տալիս։ Այդ երկու ուսուցիչները բանաստեղծներից էլ թարգմանութիւններ ունի Յովհաննիսեանը մեզ հետաքրքրող խնդրի մասին։

Այստեղ մենք, հարկաւ, կխօսենք Յովհաննիսեանի ինքնուրոյն ստեղծագործութեան մասին՝ թողնելով մի կողմ թարգմանականը:

Վերև ասացիք, որ գեղարւեստական ստեղծագործութեան էութիւնը կամ գեղագէտի կոչումը ճիշտ է ըմբռնում Յովհաննիսեանը:

Հէնց այդ ճիշտ ըմբռնումով է, որ նա դարձել է մեր նոր բանաստեղծների նահապետը:

Յովհաննիսեանը մի խոր անդունդ է փորում առօրէականի և գեղարւեստականի միջև: Առօրեայ վիշտն ու ուրախութիւնը, հոգան ու ցաւը, ձգտումն ու իդէալը սահմանափակ երևոյթներ են, որոնք մեր հոգու մէջ առաջ են բերում ճնշումն, ժխտում են լայն հորիզոնների ընդդրկումը, սիրտն ու զգացմունքը մանրացնում, միտքը կաշկանդում և կամքի առաջ դնում փոքրիկ ցատկումներ:

Գեղարւեստական վիշտն ու ուրախութիւնը, հոգան ու ցաւը, ձգտումն ու իդէալը բոլորովին այլ բնոյթ ունին: Նրանք զուտ անհատական, առօրեայ, եզակի են երևոյթներ չեն, այլ ընդհանրական: Իւրաքանչիւր մարդ՝ բանաստեղծի պատկերի մէջ իւր հոգին է ներփակում և հաղորդակից դառնում նրա ոգևորութեանն ու ներշնչումին: Եւ շատ ընական է, որ այդպէս մենք ազատւում ենք մեզ տանջող ներքին յուզումների առօրէական մղձաւանջից, երբ ընդհանրացման կնիքն է դրւում նրա վրայ:

Գեղարւեստական ստեղծագործութեան խոշոր ծառայութիւնը մարդկային կուլտուրային՝ մեր հոգու, մտքի, զգացմունքի և կամեցողութեան հէնց այդ ընդարձակման մէջ է, որ մեզ ազատում է սահմանափակ

ևսասէրներ լինելուց և դարձնում է հանրական գործորդներ:

Ի՞նչ են առօրեայ կեանքի ջնջին վշտերը, համեմատուելով դեղարւեստ սկան վշտերի հետ:

Առօրեայ կեանքում վիշտը—սոսկ վիշտ է: Ճշնշում է մեղ, մենք աշխատում ենք մի կերպ ազատուել նրա խռտանգանքից. բայց հնար չկայ փրկուելու, մինչև որ չի հեռացնւում վիշտ ծնող պատճառը:

Գիղարւեստական վիշտը, ընդհակառակը: Մենք չենք փախչում նրանից, այլ փնտրում, որոնում ենք նրան. եթէ առօրեայ վիշտ ունենք, նրա մէջ կորցնում ենք, եթէ չունենք՝ ապագայ վշտերի դէմ գինավաւելու, ընդդիմադրելու համար հոգու էներգիայ ենք ժողովում վշտակիր բանաստեղծի օգնութեամբ:

Ի՞նչ են առօրեայ կեանքի ժամանակաւոր վայելքները, որ հրապուրել միայն կարող են տհաս պատանիներին: Նրանց մէջ չկայ անանցը, մշտնջենականը: Յագեցումն են պատճառում նրանք և ապա զզւեցնում: Գալիս են ու անցնում՝ հոգու մէջ խորունկ հետքեր չթողնելով:

Գիղարւեստական վայելքը—վառ է, անանց, երանաւէտ: Նա ստեղծում է մեր հոգու մէջ զգացմունքի անհոգեթիւն, որովհետև անհատական, եղակի և մասնաւոր չլիւզմ չունի, այլ արդիւնք է հանրական աղբիւրի, բերում է տեական, օրեր—տարիներ շարունակւող բաւականութիւններ:

Այդտեղից է ծագում կեանքի երազայնութեան զբաւումը:

Ի՞նչ է նշանակում այդ:

Գիղարւեստօրէն երազել—նշանակում է սիրել

կեանքը՝ Բայց ոչ այն կեանքը, որ կայ, այլ որը պիտի լինի, որը ցանկալի է և գեղեցիկ, սիրելի է և լաւ։

Ճղճիմ հոգիները չեն կարողանում երազել, որովհետեւ նրանք իրենց անձուկ շրջապատից դէնը, աւելի հեռուն չեն կարողանում թեւակոխել, Երազելը վերացնում է հոգին տւեալ վիճակից, Թռցնում դէպի այլ եզիրք, դէպի այլ հնարաւորութիւններ։ Վիշտը և վայելքը միայն այն ժամանակ են գեղեցիկ, այսինքն գեղարեւտական, երբ նրանք տանում են դէպի երազայնութիւն, այսինքն դէպի մի վիճակ, որ կենսական մանրուքի մէջ սմբած հոգիների համար անմատչելի է, թերեւ անկարելի։

Յովհաննիսեանը՝ դիմելով կեանքին, ասում է.

Ձնչին վշտերով միշտ քո տառապանք՝

Արժանի էլ չեն երբէք վեհ հոգու.

Վայելքդ առ ժամ՝ միայն զառանցանք

Կարող են լինել տհաս պատանու։

Տհւր մշտականաչ հրաշագեղ դարնան

Վառ, երանաւէտ, անանց երազներ.

Թող մենք անձնատուր մի անհուն զգացման

Անվիշտ քուն լինինք օրեր, տարիներ...

Սակայն «անվիշտ քնոյ» վիճակը հեշտութեամբ չի ստեղծւում բանաստեղծի հոգու մէջ, Նա ևս մարդ է և ոչինչ մարդկային խորթ չէ նրան։ Նա ևս ունի իւր առօրեայ ցաւերն ու հոգսերը, շահերն ու կարիքները, որոնց օգտին, որոնց նւիրւած նա մղում է գոյութեան պայքար։ Տխրում է և ուրախանում առօրեայ հանգամանքներում, որոնք չեն բղխում ստեղծագոր-

ծութեան, բանաստեղծական ներշնչման ակունքից։ Այդ ժամանակ նա, իսկապէս որ, չունի մուսայից յատուկ հրաման երգելու համար. այդ ժամանակ նրա քնարը մունջ է մնում իսկ ինքը—անհոգի, այսինքն առանց ներշնչման, անզօր ու անձայն։

Այգօրինակ կացութեան մէջ բանաստեղծն այրուում է ստեղծագործութեան տենչով։ Նրա տակն ու վրայ եղած հոգին ուղոււմ է ներդաշնակել, ներքուստ բաւականութիւն գտնել և վայելել անխառն հաճոյք. մի խօսքով հանգիստ գտնել երգի, այսինքն յուզմունքի նւագային արտայայտութեան մէջ։ Բայց չկայ ու չըկայ այդ ցոնկալի վայրկեանը, բացակայում է ոգևորութիւնը. մի վիճակ է դա, երբ բանաստեղծը զգում է հոգու դատարկութիւն, կարօտ է անկեղծ, վառ զգացման.

Կուզէի գտնել հանգիստ երգի մէջ,
Մի ղեղուն, մաքուր, հոգեբուղիս երգի,—
Բայց սիրտըս դատարկ, և ես մի անշէջ
Կարօտ եմ բոցոտ, անհուն զգացմունքի։

Հետաքրքրական է իմանալ, թէ երբ է լինում զգացմունքը «անշէջ, բոցոտ և անհուն»։

Գեղազէտ Յովհաննիսեանը պատասխանել է այդ հարցին.

—Անկեղծութիւնն է գլխաւոր պայմանը։ Երբ չկայ անկեղծութիւն, զգացմունքը կորցնում է իւր թովչանքն ու հմայքը։ Զգացմունքը, երբ կեղծ է ու շինծու, չի կարող անշէջ լինել։ Որովհետեւ բռնադրօսիկ կերպով հանդէս բերած զգացմունքը, տեսական չէ, անցնում է արագ, հոգու մէջ ոչ մի խորունկ հետք

ՀԱՅ ԳԼԽԱՆՈՐ

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱ

չթողնելով: Բռնազբօսիկ լինելով նա միևնոյն ժամանակ կաշկանդում է մեզ, մենք փախչում ենք նրանից, որովհետև նա մերը չէ, հարազատ և ինքնաբերական չէ, այլ արտաքուստ, հարկադրանքով պատասխատւած է մեր ներքին աշխարհին: Զգացմունքի անկեղծութիւնն է, որ ծնում է նաև նրա անշէջ լինելու երևոյթը: Անշէջ զգացմունք ասածդ չի նշանակում, որ յաւիտենապէս պիտի ապրի մեր հոգում: Դա անկարելի էլ է: Ամեն ինչ մշտապէս փոխւում փոփոխւում է թէ մեր շրջապատում և թէ մեր ներքին աշխարհում: Որովհետև ինչ որ բնական է, նա միևնոյն ժամանակ և՛ ենթակայ է փոխանցման: Անկեղծ զգացմունքն ևս չի կորչում անհետ, հէնց այդ փոխանցման օրէնքի պատճառով: Նա առաջ է բերում եռանդ, ստեղծագործութիւն, և այդ ամենի հետ միասին հոգեպարար յիշողութիւններ, որոնք դիւրաւ չեն անհետանում մեր հոգու հարկզոնից: Հէնց այստեղից է ծագում զգացմունքի անհոռւութիւնը: Նա եռանդ դառնալով և ստեղծագործութեան փոխանցւելով մեզ ազատում է չեղոք, անջատ, անհատական սահմանների մէջ կղզիացած մնալու տւայտանքից: Նա մեզ կցորդում է մի մեծ ամբողջի, մի հանրական միութեան հետ և դարձնում կենսական գործօն, որ անթիւ յիշողութիւններով վերապրում է իւր և իւրայինների ներքին աշխարհը, մի խօսքով՝ ստեղծագործում:

Սակայն ամեն մի վերապրում կամ յիշողութիւն, իւր և իւրայինների հոգեկան կացութեան ամեն մի վերաբարադրում դեռ ստեղծագործութիւն չէ, երբ պակասում է այն, ինչ որ ամենաէական պայմանն է. զգացմունքը պէտք է վերապրւի կամ յիշւի բոցոտ

կերպով: Սովորական մահկանացուն չի կարողանում իւր և իւրայիններէ մի անգամ ապրած զգացմունքը վերապրել բոցոտ շեշտով, ուստի և նա հեռու է սաստ-
ւածային ձիրքից: Ի սչ է նշանակում այդ: Զգաց-
մունքը առաջին անգամ ապրելիս մենք յաճախ չենք
կարողանում նրան անջատել յարակից, երկրորդական
և կողմնակի հոգեկան խառնուրդներից: Երկրորդ ան-
գամ վերապրելիս կամ վերյիշելիս, մենք—սովորական
մահկանացուներս—նրան կորցնում ենք և նա թալկա-
նում է աննշանակ մանրամասնութիւնների մէջ և մո-
ռացում՝ կորցնելով իւր անշէջ և անհուն լինելու յատ-
կութիւնները: Գեղազէտը անլ ձևով է պատկերացնում
մի անգամ ապրածը: Նա ազատում է զգացմունքը
աւելորդ և նսեմացնող խառնուրդներից և վերապրում
շեշտուն կերպով, էական և գլխաւոր պատկանելիքնե-
րով, եթէ կուզէք՝ որոշ, միակողմանի լուսաւորու-
թեամբ, որ աւելի ցայտուն է դարձնում նրան և հան-
դէս բերում «բոցոտ» լինելու յատկութիւնը:

Մի խօսքով՝ իւրաքանչիւր գեղարւեստական ներ-
շնչում բերում է մեր հոգու համար ստեղծագործու-
թեան պարզեած ներքին ներդաշնակութիւնը կամ հո-
գեկան հանգիստը, երբ վերաբաժնուած է մի անգամ
ապրածը, որոշ ժամանակ ճաշակած զգացմունքը ան-
շէջ, անհուն և բոցոտ կերպով:

Եւ այսպէս, ի վերջոյ, մենք տեսնում ենք, որ
կեանքի երազայնութեան զրւատումը Յովհաննիսեանը
հիմնաւորել է զգացմունքի հէնց այդ եռակի յատկու-
թիւնների բնորոշումով: Այդ կերպ նա մի անգունդ է
փորել գեղարւեստականի և առօրէականի միջև, ինչ-
պէս շեշտեցինք այս գլխի սկզբում:

Բացի դրանից մեր բանաստեղծը մինոր կարևոր անդունդ էլ է փորում գեղարվեստականը աւելի ևս բնորոշ դարձնելու համար:

Դա նրա դժգոհութիւնն է կենսական կռիւների և գիտութեան հանդէպ:

Այդ դժգոհութեամբ Յովհաննիսեանը շեշտակի կերպով բաժանւում է իւր նախորդներից՝ «հրապարակաբօս բանաստեղծներ» Գամառ-Փաթիպայից և Շահազիզից:

Գեղարվեստը չի կարող ներբողել կեանքի կռիւները, որովհետեւ դրանով դաւաճանած կլինէր իւր դաւանած կեանքի երազայնութեան հիմնական ապրումներին, որոնցից սնունդ է քաղում մշտապէս: Կըռիւր փոթորկում է մեր հողին, վերացնում հանգիստ ու խաղաղութիւն նրա մէջ, շեշտում առօրէականի վըրայ, հետեւապէս և մեկուսի վանում մեր զգացմունքների անհունութիւնը, անշէջ ու բոցոտ լինելու յատկութիւնները: Այդ կերպ սպանւում է գեղարվեստը և սկսւում է հրապարակաբօսութիւնը:

Իւրաքանչիւր բանաստեղծ իւր դժգոհութիւնը, աւելի ճիշտ ասած, ձեռնադահութիւնը կենսական կռիւների հանդէպ, արտայայտում է այնպէս, ինչպէս Թելադրում են սեպհական տաղանդի և գեղեցկի բնոյթը: Յովհաննիսեանը մի միջոց ունի միայն կեանքի տալատանքների հանդէպ—ամեն ինչ անցողիկ է.

Զգիտեմ ինչո՞ւ, երբ տեսնում եմ ևս,
Ինչպէս սաստկանում, աճում է չարիք
Նւ անադորոյն դաժան սֆինքսի պէս
Խլում է մատաղ մեր կեանքի ծաղիկ,—

Եւ մտածում եմ, որ այս չարիքն էլ
 Գիտի չմնայ անվերջ, անվախճան.
 Թէ չար, թէ բարի, խինդ թէ վիշտ անել՝
 Կանցնեն զերդ երազ, ինչպէս ամեն բան ...

Ասացինք, որ բանաստեղծը դժգոհ է նաև գիտութիւնից։ Սուրբին նւագ տարօրինակ է թւում այս դժգոհութիւնը։ Շատ պարզ է թէ ինչո՞ւ։ Եթէ բանաստեղծը հոգեբանօրէն չի կարողանում տանել առօրէականը, մենք հասկանում ենք նրան, որ այդպէս էլ պիտի լինի — գեղարվեստական ընդհանրացումը և կեանքի մանրութքը հակառակ բեկոններ են։ Մի քիչ անհասկանալի է թւում գիտութեան նկատմամբ տածած հոգեկան պաղութիւնը, որ անկեղծօրէն արտայայտում է բանաստեղծը։ Չէ՞ որ գիտութիւնն էլ տալիս է որոշ ընդհանրացումներ, որոնք բարձր են առօրէականութիւնից այն չափով, ինչ չափով տանում են դէպի տիեզերական անհունութիւն և յաւերժութիւն։ Սակայն և այնպէս կայ տարբերութիւն գիտական և գեղարվեստական ընդհանրացումների միջև։

Ամենից առաջ գիտութեան և լիրիքական գեղարվեստի ուսումնասիրութեան մեթոդները ներհակ են միմեանց սկզբունքային տեսակէտով։ Գիտութիւնը միշտ հարցնում է՝ ի՞նչ է տրւած, ի՞նչն է իրականը և անհրաժեշտը։ Իսկ գեղարվեստի վախճանական նպատակն է գտնել՝ ի՞նչն է ցանկալի հարցի պատասխանը։ Ձի կարիլի ասել, որ գեղարվեստը իւր այդ մեթոդով դաւաճանում է իրականութեանը, դուրս է գալիս նրա սահմաններից։ Ո՛չ։ Տիպականօրէն պատկերացնող գեղարվեստի մէջ նա ամբողջապէս իրականութեան շունչն

ունի իր մէջ և այդտեղ նա գիտութեան հզօր աջակիցն է այն տարբերութեամբ միայն որ նրա ընդհանրացումները պատկերներով են արտայայտուում, իսկ գիտութեանը-դատողութիւններով:

Յուզական ապրումների գեղարւեստի մէջ է միայն, որ գիտութիւնը շեշտակի բաժանւում է գեղարւեստից: Ծանկալիութիւնը որպէս հիպօթէզ է հանդէս գալիս գիտութեան մէջ և ոչ որպէս ճշմարտութիւն: Այն ինչ ցանկալին հէնց լիրիքական ճշմարիտն է ըստ ինքեան:

Այստեղից է ծագում և լիրիքայի խորհրդակիր բնաւորութիւնը: Գիտութեան նպատակն է բոլոր կենսական և տիեզերական խորհուրդները մերկացնել և բացադրել, մարդկային կեանքը բերել և միացնել տիեզերական կեանքին առանց հիմնական տարբերութիւն դնելու երկուսի միջև՝ ամենուրեք նոյն կենսաբական օրէնքների ազդեցութիւնը որոնելով: Նրա մեթօդի հիմնական զէնքն է անալիզը-վերլուծութիւնը, որ խորտակում է ամենատեսակ միութիւնները՝ յօրինում որոշ օղակներ և նրանց կցում մի երկայնաձիգ շղթայի՝ որոշ ընդհանուր տեսակէտով բացադրելով ամեն ինչ, վերլուծման միակ ճանապարհն է սկեպտիքական վերաբերմունք դէպի այն բոլորը, ինչ որ խորհրդի կնիք է կրում և չի մտնում որոշ բանաձևերի տակ՝ բացայայտելով ամբողջովին:

Այդ ամենը, ի հարկէ, չի կարող հաշուել լիրիքական ապրումների այն հոյակապ խորհրդի հետ, որ մենք անւանեցինք կեանքի երազայնութիւն, որ բացասում է ըստ ինքեան կասկածն ու վարանքը՝ բոլորանւէր կերպով յենւելով ցանկալիին:

Գիտութիւնն ինչպէս մի թոյն դանդաղկոտ

Աննկատելի վարակեց հոգիս
Խնչալէս ցուրտ ձմեռ միտքս կասկածոտ
Քաղեց խորտակեց ծաղիկը կեանքիս...

Եւ իսկապէս, «կեանքի ծաղիկը» և «կասկածոտ միտքը» հակոտնեայ ոյժեր են, որոնց անհաշտութիւնը «վարակում է» հոգու հանգիստը և խաղաղութիւնը՝ ոչնչացնելով ամեն անասկ գեղեցկի գոյութիւնն անգամ:

Լիրիքան ընդգրկում է մեր հոգու յոյգերի ընագաւառը: Այսինքն այն բոլորը, ինչ որ մեր մէջ տարերային է, ինչ որ չի ենթարկւում ոչ մի բռնի կարհաստահան կաշկանդման, մի խօսքով՝ հոգու անկեղծութիւնը ամենից առաջ յոյգերի աշխարհում պիտի փնտռել:

Գոյութեան կռիւը, հացի խնդիրը յաճախ հարկադրում են մարդկանց ծածկել իրենց ամբողջ ներքինը, թաղցնել հոգու մտերմական ապրումներն և հանդէս բերել այն ամենը, ինչ որ շինծու է, կեղծ և անհարազատ մարդուս պսիխիկային: Մեր միտքը, համոզումները աւելի շուտ են ընտելանում այդ կեղծիքին, քան յոյգերը, որովհետեւ վերջիններս այնպէս փոփոխական և դիւրաթեք չեն, ինչպէս մեր ինտելեքտէլ աշխարհը: Այդ կերպ առաջ է դալիս յոյգերի և մտքի մէջ մի ներքին աններդաշնակութիւն, որ բացասում է ինքնին գեղարւեստական գեղեցկի հնարաւորութիւնը, որովհետեւ վերջինս արդիւնք է մտքի և յոյգերի հարմօնիային:

Այդ հարմօնիան ցայտուն կերպով է ցուցադրում Նադսօնը իւր «Պօէտ» բանաստեղծութեան մէջ, որ թարգմանել է Յովհ. Յովհաննիսեանը իւր ստեղծագործութեան «հաւատոյ հանգանակը» նրա մէջ գտնելով իրրեւ գեղապէտ:

Թող երգդ հնչէ, որպէս վտակ կարկաչուն,
 Որ սահում է մեղմ յորձանքով արծաթի,
 Որպէս աղբիւր եռան յոյսեր, ցանկութիւն,
 Եւ ոյժ լսւի և մի ծիծաղ կենդանի:
 Թող մոռացւինք մատաղ ձայներ լսելով:
 Թռչենք քեզ հետ երազների այն աշխարհ,
 Ուր չեն թափւում դառն արտասուք տանջանքով
 Ուր կայ հանգիստ, գեղեցկութիւն սիրավառ.
 Զւարճանանք՝ թողած ամին վիշտ, հոգսեր,
 Եւ մանկութեան անուրջներով մենք ապրենք,—
 Եւ մենք կօրհնենք այն ժամանակ քո գործեր,
 «Դու պօէտ ես» քեզ հրճանքով մենք կասենք:

Շատ քիչ քնարերգուների մօտ է կեանքի երազայնութիւնը այսպիսի յաջող արտայայտութիւն գտել:

Այստեղ աւելի քան պարզ կերպով, ցուցադրւած է գեղարւեստական ստեղծագործութեան տարբերութիւնը այլ ստեղծագործութիւններից,—հրապարակախօսական, գիտական, իրիւսոփայական և այլն:

Աւելի ևս շեշտուն է խրամատը գեղարւեստականի և առօրէականի միջև: Մի բնորոշ կէտ, որով բանաստեղծ Յովհաննիսեանը տարբերւում է իրենից առաջ ոտանաւորներ գրող հրապարակախօսներից—Միքայէլ Նալբանդեանից, Ս. Շահազիզից և Գամառ-Քաթիպայից:

Անցնենք այդ տարբերութեան բնորոշմանը:

II

ՆԱԽՈՐԴ ԵՐԴՉԻՆ

Յովհաննիսեանը իրաւամբ համարուում է մեր նոր բանաստեղծների նահապետը: Նա այն ճամբարաժան սիւնն է, որ անջատուում է երկու տարրեր աշխարհներ միմեանցից, մեր հին երգիչներին նոր երգիչներից: Շատերը չեն ըստականացել այդ բաժանումը շեշտելով: Նրան վերագրել են և «կամուրջի» դերը: Յովհաննիսեանն այն կամուրջն է, որ կապում է հին երգիչներին նոր երգիչների հետ՝ իւր ստեղծագործութեան մէջ տեղ տալով նաև հին երգիչների սիրած հայրենասիրական ազգային մօտիւններին:

Մենք հին, կամ նախորդ երգիչներ ասելով՝ պիտի հասկանանք Ս. Շահազիզ և Գամառ-ֆաթիպա*) մեկուսի թողնելով Միք. Նալբանդեանին, որի կապը Յովհաննիսեանի հետ հեռաւոր կերպով անգամ չի կտրելի նկատել**):

Հանդուցեալ Գ. Վանցեանը Յովհաննիսեանի մա-

*) Այստեղ խօսքը միայն Ջահադիդի մասին կլինի, իսկ Գ.-Քամիլպաշի մասին կխօսենք VI գլխում:

**) Տես մեր «Միրայիլ» նալբանդեան. ԱզգուՅեան հրատարակախօսը» գրքոյկը:

սին խօսելով՝ նկատում է, թե չէր կարող զատել այն խոշոր մօտիւնների ազդեցութիւնից, որոնք երեւան էին գալիս նրա անմիջական նախորդների՝ Գամառ-Քաթիպայի և Շահալիզի մէջ. այդ պատճառով նրա երգերի մի բաւական ստւար մասը ազգային-հասարակական բընոյթ ունի:

Հանգուցեալը, ինչպէս դիտէք, իւր գոյութեան ընթացքում ոչնչով ցոյց չի տւել, որ կարող է գեղարւեստական գործերի և խնդիրների ճիշտ գնահատող լինել: Այդ տեսակ մարդկանց հետ յաճախ թիւրիմացութիւններ են պատահում գեղարւեստական քննադատութեան սահմաններում:

Անցնենք հանգուցեալի որոշման քննութեանը.

Դուրս է գալիս, որ Գամառ Քաթիպան և Շահալիզը ունեցել են ինչ որ խոշոր մօտիւններ, որոնց ազդեցութիւններից չէր կարող զատել Յովհաննիսեանը. յետոյ պարզում է, որ այդ մօտիւնները ազգային-հասարակական բնոյթ ունին:

Ամենից առաջ նկատենք, որ Գ. Վանցեանը չի պարզում այն հարցը, թէ ինչու Յովհաննիսեանը չէր կարող զատել իւր նախորդների խոշոր մօտիւններից: Դա շատ հետաքրքրական կլինէր: Բայց հէնց այդ կէտի մոլթ թողնելը ցոյց է տալիս, որ հարցը պարզ չի եղել հանգուցեալի համար:

Գեղարւեստական ստեղծագործութեան մէջ մօտիւնների նմանութիւնից երբէք չի հետևում հոգիների նմանութիւն կամ հարազատութիւն: Նման մօտիւններ երգողները յաճախ նման դրդապատճառներից չեն ելնում: Կարևորը հէնց այդ դրդապատճառներն են: Շատ անգամ երկու բանաստեղծ երգում են նման մօտիւնե-

բով, բայց մէկի մօտ երգը շինծու և կեղծ է հնչում, իսկ միւսի մօտ բնական և անկեղծ, ոգևորութեամբ և ներշնչումով թաթաղուն: Այստեղ արդէն մօտիւնները մի կողմ պիտի դնել և քննել դրդատառածները, թէ ինչու այդ այդպէս եղաւ, ինչու նման մօտիւնները չմիացրին այդ երգողների հոգիները, այլ ընդհակառակը, բաժանեցին: Իսկ զեղարւեստական ստեղծագործութեան մէջ այլ դրդատառած աչի կարելի որոնել, քան տաղանդը:

Եթէ տաղանդի բնոյթը որակեց՝ կնշանակի մենք իրազեկ ենք դառնում այն կացութեան և ժամանակին, որի ծնունդը և որի արտայայտիչն է տւեալ տաղանդը:

Այսպէս ուրիմն, եթէ Յովհաննիսեանի և իր նախորդ երգիչների մէջ կայ ինչ որ նմանութիւն, եթէ նա չի կարողացել անհաշտ մնալ նրանց ստեղծագործութեանը և մասամբ մկրտել է նրանց ոգևորութեան և ներշնչման աւազանում,—կնշանակի մեր բանաստեղծի և իւր նախորդների միջև կայ տաղանդի ինչ որ նմանողութիւն, միատեսակ կացութեան և ժամանակի հարկս դրական արտայայտութիւն:

Եթէ տաղանդների այդ նմանութիւնը, որ մի և նոյն է թէ հոգիների հաբաղատութիւնը՝ պայմանաւորւած որոշ կացութեամբ և ժամանակով, մեզ համար հաստատւի վերջնականապէս, այն ժամանակ հասկանալի կը դառնայ միանգամայն թէ ինչո՞ւ Յովհաննիսեանը չէր կարող դատուի այն խոշոր մօտիւնների ազդեցութիւններից, որոնք երևան էին դալիս նրա անմիջական նախորդների մէջ: *)

*) Եւ բոլորովին ընդհակառակը, եթէ մենք ցոյց տանք, որ Յովհաննիսեանը և իւր նախորդները տարբեր տիպի տաղանդ-

Ս. Շահազիզի ազդեցութիւնը Յովհաննիսեանի վրայ յաճախ յիշատակուում է:

Ուրեմն, խօսենք հէնց Շահազիզի մասին:

1890 թւականին Ս. Շահազիզը վերջին անգամ, ինչպէս ասում են, քնարն առնում է իւր ձեռքը և երկար տարիների լռութիւնը խզում մի երգով, որի մէջ արտայայտում է հետեւեալը.

Հանում եմ զրահս, և զէն և զարդեր,
Յանձնում եմ դորանց մանուկ սերնդին:

Ինքն էլ գիտակցում է, որ իւր բանաստեղծական ստեղծագործութեան կարճ, չափազանց կարճ ընթացքում (ընդամենը մի տարի է ստեղծագործել) եղել է մարտիկ, կռուդ հասարակական բարիքի համար:

Ամենախոշոր գործը «Լևոնի վիշտն» է, որ հէնց այդ կռիւ արտայայտութիւնն է ոտանաւորով:

Սակայն ինչ կռիւ էր դա և ո՞ւմ դէմ էր մղուում:

Ներ են եղել, ապա ուրեմն նրանց հոգիների միջև նմանութիւն չկայ եւ չէր կարող լինել: Այդ ժամանակ էլ միզ համար կոտորի, որ Յովհաննիսեանի «կամուրջ» լինելու առանձնայատկութիւնը ջուրը պիտի ընկնի, որպէս աւելորդ ծանրաբեռնութիւն: Ահա հէնց այդ ժամանակ մեզ համար դարձեալ կպարզւի, որ նախորդ հրգիչների «խոշոր մոտիւնների ազդեցութեամբ» մեր քանստեղծը հիւսել է, աւելի ճիշտ՝ շինել է ոտանաւորներ, որոնք ինքնաթուղիս չեն, այլ ընդօրինակութիւն, չեն եղնում նրա տաղանդի խորքից, այլ մուրաժոյ են, ուստի եւ մի անտեղի բիծ են գոյացնում նրա ստեղծագործութեան վրայ: Եւ դրա համար պիտի ցաւել եւ ոչ թէ ինչ որ «կամուրջ» լինելու գովաբանական տեսութիւն յորինել:

Շահադիդը XIX դարի կովկասահայ վերածնութեան
ռահվիրաներից մէկն էր: Մի ժամանակ էր դա, երբ
նոր, ևրդական հասկացողութիւնները մուտք են դոր-
ծում մեզ մօտ նորածին դրամատիրութեան հետ միա-
սին և յետ մղում կղի սկան հողատիրական շրջանի
ժառանգութիւնները—մտաւոր, բարոյական և նիւթա-
կան արժէքները: Մի ճեղքւածք առաջ եկաւ հին և նոր
կեանքի, հին և նոր հասկացողութիւնների միջև: Ամեն
ինչ տակն ու վրայ եղաւ և սկսեց մի յախուռն պայ-
քար նոր գաղափարների դրօշակով: Վերածնութեան
շարժման գլուխն անցան «Հիւսիսափայլի» մարտիկնե-
րը Միք. Նալբանդեանի գլխաւորութեամբ:

Ահա հէնց այս բովում կաղապարեց Ս. Շահադի-
դի քնարը և նա սկսեց ոտանաւորի ձևով հարապարա-
կախօսութիւններ անել—կուել նոր գաղափարների ա-
նունով և քարոզել՝ գեղարւեստը ծաղրելով, արհամա-
րելով այն Մուսային, որի բռնութիւնը խորտակւած
էր «Հիւսիսափայլի» քուրայում:

Ս. Շահադիդը իւր գլուխ-գործոցի մասին իւրիյ
Վեսելովսկուն գրել է հետեւեալը. «Լեոնի վիշտը ստեղծ-
ւել է այն ոգևորութեան շնորհիւ, որ առաջ էր եկել
գիւղացիների ազատութեամբ: Յիշում եմ, թէ ինչպէս
ես սրտիս մօտ էի առնում այդ անցքը»:

Միք. Նալբանդեանն էլ ուշադիր կերպով կարդա-
լով «Լեոնի վիշտը» բացականչել է. «Լեոնի վիշտը—իմ
վիշտն է»:

Եւ իսկապէս. «Լեոնի վիշտը»-դա «Հիւսիսափայլի»
հրապարակախօսութիւնն էր, որ իւր ուսերի վրայ էր
տանում ազգութեան հրապարակախօսը—Միք. Նալ-
բանդեանը:

«Լևոնի վիշտը» նւիրւած է ժամանակակից հասարակական հարցերի լուսաբանութեանը. հէնց այդ հանգամանքն է դրդել Շահազիզին գրելու պօէմ, ինչպէս ինքն էլ խոստովանեց: Նրա մէջ գեղարուեստ չկայ, որովհետեւ առօրէականութիւնն է թեւատարած իշխում. շատ քիչ տեղեկութիւններ է մեզ հաղորդում իւր հերոսի անձնաւորութեան և կենսագրութեան մասին, յաճախ բոլորովին մոռանում է նրան և սկսում է իւր երկայնաձիգ քարոզները, որոնց տալիս է լրագրական կրօնութեան բանակուի բնաւորութիւն:

Լևոնը մտածում է ազգին օգտակար լինել, բայց միջոց չգիտէ.

Նա մինչև անգամ միջոց չգիտէր
Որով ձեռնառու լինէր իւր ազգին.
Եւ սորա համար առաւ իւր ձեռն
Այս միակ հնարս. որոշեց ջրել
Թիւր սկիզբները այն կորստաբեր,
Որով հայի կեանքը իսպառ էր խախտւել:

Պիտի ցաւել միայն, որ այդպիսի մի որոշում նա իրագործել է ոտանաւորի ձևով: Շահազիզը շատ շուտ հասկացաւ իւր տաղանդի բնոյթը և անցաւ պրօզային՝ գրելով «Հրապարակախօս ձայն», «Յիշողութիւններ Վարդանանց տօնի առթիւ» և «Մի քանի խօսք իմ ընթերցողներին» (որում Վահանանց շարժման մասին է ճառում):

Այս բոլորն ասելով, ի հարկէ, մենք չենք ժխտում, որ Շահազիզը գրել է իսկական բանաստեղծութիւններ: Եւ զարմանալի էլ կլինէր, եթէ գրած չլինէր: Ծիշտ է,

բանաստեղծական տաղանդը «երկնային ձիրք» է. բայց այդ ձիրքը մարդու մէջ է արտայայտուում և ոչ ամպածրար հրեշտակներու Իսկ մինք գիտենք, որ մարդս աւելի շատ կապւած է երկրի հետ, քան երկնքի, Բանաստեղծութիւնն էլ այդպէս է. մարդկային կեանքի և հոգու արտայայտութիւնն է այն. լեզուն էլ իւր մէջ պարունակում է նրա տարերքը: Ուրեմն և իւրաքանչիւրի մէջ կայ որոշ բանաստեղծական կայծ, բայց անզարգացած ձևով. բանաստեղծի մէջ այդ կայծը փոխւում է հրդեհի և լուսաւորում շատերի ուղին:

Ս. Շահաղիղը տաղանդով հրապարակախօս էր, բայց մի տարւայ (1864 թ.) ընթացքում Մոսկւայում նստած հապճեպով դրեց բազմաթիւ ոտանաւորներ, որոնց մէջ իւր ծննդավայրի կարօտը, մօր մասին յիշողութիւնները, հայրենի բնութիւնը—իսկապէս որ բանաստեղծական ներշնչման կնիք են կրում: Եթէ որեւէ դրադէտ հայ իրեն նեղութիւն տայ յանգիւր հիւանդութեան և արհեստի մէջ մի փոքր կատարելագործւելու և մի տմուայ ընթացքում, ինչպէս Շահաղիղն արաւ, թւով 60 ոտանաւոր գրի, դժւար թէ նրան չյաջողւի մի երկուսը բանի նման դուրս բերել...

Այժմ հետաքրքրական է իմանալ, թէ ինչ վերաբերմունք է ցոյց տալիս Յովհաննիսեանը Ս. Շահաղիղին:

Ամենից առաջ նկատենք, որ Յովհաննիսեանի կացութեան և ժամանակի պայմաններն այլ էին, քան Ս. Շահաղիղինը:

Այս մէկ:

Յովհաննիսեանը բանաստեղծ է տաղանդով և ոչ հրապարակախօս:

Այս էլ երկրորդ տարբերութիւն:

Տեսնենք մէկը և միւսը:

Կարևոր ենք համարում սկսել երկրորդ կէտից: Յովհաննիսեանը բանաստեղծ է, գեղագէտ, ինչպէս տեսանք նախորդ գլխի մէջ: Նա առօրէականի հետ ոչ մի գործ չունի, այլ գեղարվեստական պատկերացումներով է մտածում և յուզւում:

Իսկ Շահաղիզը «Հին շինւածը—պէտք է նորոգւի» քարոզելով՝ ամբողջապէս թաթախւած է բանակուսական կրքոտութեամբ և նրա դրօշակի վրայ գրւած են հէնց իր իսկ խօսքերով. «Հասաւ ժամանակ մենք բողոքում ենք»: Մինչդեռ Յովհաննիսեանը իբրև բանաստեղծ գործ չունի այդ բողոքների և նորոգչական ըմբոստացումների հետ. նա երգում է կեանքի երազայնութիւնը, տրտնջում վերջնիս աղճատման դէմ, ասելով.

«Ե՛րբ ես թոյնը ճաշակեցի գիտութեան»...

Այդ ժամանակ ահա աշխարհը չի պատկերանում նրան իբրև մի հոյակապ երազ: Այն ինչ վերածնութեան ռահվիրայ և մարտիկ Շահաղիզի համար գիտութեանը «Խելքի բանալի է» և «Արարիչ լուսոյ», իսկ կեանքի երազայնութիւնը մի բռնութիւն, որ գործադրւում է նրա հոգու վրայ:

«Կեցցէ գիտութիւն—պաշտօնեայ եմ քեզ.

Խոստովանութեամբ ծունր եմ խոնարհում,

Որ դու ես միակ Արարիչ լուսոյ.

Խելքիս բանալին քեզ եմ նւիրում

Արա՛ ինչ կամիս—եղիցին կամք քո».

Յովհաննիսեանի տաղանդը զարգացաւ մի այնպիսի-

սի ժամանակ, երբ կովկասահայ հասարակական կեանքը բաւականաչափ կայուն և հաստատ կերպարանք էր ստացել. այսինքն այն դատակարգը, որ Ս. Շահաղիզի բերանով կուռւմ էր, ալժամ խոշոր դիրքեր էր գրաւել, ապահովել էր իւր գերիշխանութիւն ամեն կերպ, կովկասահայ կուլտուրական կեանքի հետ կապւած արժէքներն այժմ այլ դնահատութեան էին ենթարկուում, քան վերածնութեան առաջին պիօներների ժամանակ:

Այժմ անցել էին արդէն մանուկ վերածնութեան օրերը, երբ գեղարեւսող յետ էր մղւած հրապարակախօսութեան առաջ. և կովկասահայ հասարակութեան անդրանիկ ինքնահայեցողութեան, խաղաղութեան անկուլ աղբուրների մարմնացումն հանդիսացաւ Յովհաննիսեանը, մամուլի և գրականութեան գործիչների կողմից մի սրտադին վերաբերմունքի հանդիպելով: Յովհաննիսեանի անդրանիկ քննադատները նրա ոտանաւորների ժողովածուն «նոր դիւտ» են անւանում, նրա ոտանաւորներն արժանի են համարում օտար լեզուներով թարգմանւելու, որովհետեւ նրանց մէջ «մարդկային հոգու ընդհանուր հանգամանքներ» են ցուցադրւած և ոչ թէ այն տեսակ աւօրեայ, տեղական և սահմանափակ քաբողներ են, ինչպէս նախորդ երգիչների խրատական երգերը:

Այդ նախորդ երգիչներից մէկին—Ս. Շահաղիզին գնահատել է հէնց ինքը—Յով. Յովհաննիսեանը:

1877 թ. Բանաստեղծը մտնում է Լապարեան ծնամարանը, ուր նա աշակերտում է Ս. Շահաղիզին, որ խիստ ազդեցութիւն է անում պատանի Յովհաննիսեանի վրայ «հայախօս» և «հայաշունչ» յատկութիւններով,

որոնցից զուրկ էին ճեմարանի մնացեալ հայ պաշտօնեաները:

Լազարեան ճեմարանի այդ ժամանակեայ վիճակի մասին գրել է պ. Մ. Բարխուդարեանցը. «70 թւականներին,—ասում է նա,—Լազարեան ճեմարանի վարչութեան գլուխն էին անցել Նիկողայոս Դելիանեանց, որպէս վերատեսուչ և Գէորգ Քանանեանց, որպէս տեսուչ: Երկուսն էլ ծագումով հայ, երկուսն էլ արտաքուստ իսկական հայ, և աւել ոչինչ: Եթէ առաջինի նկատմամբ, որ հայերէն խօսել չգիտէր, այլ գիտէր միայն իւր անուն ու ազգանունը ստորագրել, իմ ասածը զուտ ճշմարտութիւն է, ապա երկրորդի նկատմամբ, որ խօսել էլ գիտէր և գրել էլ, ճշմարտութիւն չէ այն չափով, ինչ չափով տարին մի անգամ «Շնորհաւոր Մոսկով և Մկրտութիւն», մի անգամ էլ «Քրիստոս յարեալ ի մեռելոց» հայերէն արտասանած խօսքերը կարող են մանուկներին հայ հոգի ներշնչել կամ գոնէ ազդել, որ նրանք իրենց հետ բերած հայութիւնը պահպանեն: Ի հարկէ, չունեցած բանը ուրիշին տալ և ներշնչել չի կարելի: Եթէ ուսուցչական կազմի մէջ կային մարդիկ, որոնք աշակերտների մէջ հայութիւնը, ազգային զգացումը վառ ու բորբոք էին պահում, դրանցից մէկը նա էր, որի գրականական և հասարակական գործունէութիւնը մեր մէջ է անցել—դա բարի յիշատակութեան արժանի հայախօս և հայաշունչ Սմբատ Շահազիզեանն էր, որի անունն ես այսօր մի առանձին երախտագիտութեամբ եմ ուղում յիշած լինել. իսկ միւսը, մասամբ, տ. Յակովբ ա. ք. Սուրէնեանցը: Երկուսին էլ Յ. Յեանը ոտանաւորներունի նւիրած»:

Յայտի է, որ Յովհաննիսեանը սկսել է ոտանաւոր-

ներ դրել պատանեկան հասակից, այն էլ Լազարեան ճեմարանում: Հասկանալի է, թէ ի՞նչ դիւթիչ ազդեցութիւն պիտի անէր նրա վրայ Ս. Շահազիզը:

Յովհաննիսեանը՝ հրեք բան է գնահատում իւր ուսուցչի մէջ. նախ՝ նրա լեզուն, յետոյ՝ նրա կարեկցութիւնը դէպի հայրենի վիճակը և, վերջապէս, նրա քարոզութիւնները,

Ինչպէս կարկաչուն մի առակ կայտառ,
 Ինչպէս զանգակի արծաթի հնչիւն,
 Լսեցի անուշ մայրենի բարբառ,
 Տեսայ վառ դեղմունք, ոգևորութիւն:

Միջավայրի այն պատկերը, որ տւեց քիչ վերեւ պ. Բարխուդարեանց, մայրենի լեզւի այն արհամարհած վիճակը, որ տիրում էր Լազարեան ճեմարանում հէնց այն ժամանակ, երբ դեռ նոր բողբոջում էր Յովսաննիսեանի ձիրքը, — բնական է որ պատանի բանաստեղծի հոգում պիտի յաւերժօրէն տպաւորէին Ս. Շահազիզի պատկերը իրրեւ խորհրդանշան «հայախօս և հայաշունչ» մարդու:

Յայտնի է, թէ որքան խոշոր նշանակութիւն ունի լեզուն բանահիւսութեան մէջ: Առաւել ևս յղկած, յստակ ոճի այն շկոլան, որ ստեղծել էր Ս. Շահազիզը, Յովհաննիսեանի համար մի թարմ աւազան պիտի դառնար, ուր նրա նոր բուսած թւերը պիտի տամկէին դէպի վերերը խոյանալու համար:

Եւ ես մկրտւած նոր մարդ նոր հոգով,
 Մանուկ հրճանքով գոչեցի ազատ.

«Կեցցես, ով քերթող, քո թովիչ երգով,
Կեցցես յաւիտեան լեզու հարազատ:

Սաւկայն Յովհաննիսեանի ստեղծագործութեան ազդակը լինելով լեզուն, իրրե ձև և միջոց նշանակալից դեր խաղալով, մի և նոյն ժամանակ ստեղծագործութեան բովանդակութիւն չի կազմում: Յովհաննիսեանի ստեղծագործութեան բովանդակութիւնն են կազմում սէրը և կարեկցութիւնը:

Յովհաննիսեանն ոգևորւած շեշտում է, որ իւր ուսուցիչը «կարեկից խօսք» է ասել «հազար ցաւերով պատառւած սրտին» — այսինքն հային:

Այնուհետև սկսում է ներբողել Շահադիյի հրապարակախօսական գործունէութիւնը:

... Գիտութեան զրահով

Զինավառեցան լուսոյ զաւակներ,

Պատռեցին խաւարն ամուր ձեռներով:

Եւ հնչեցրին.

Կենդանի քարոզ վերածնութեան...

Գիչ առաջ մենք տեսանք, թէ ինչպէս Յովհաննիսեանը դժգոհում էր գիտութեան դէմ, որ թոյնով վարակել է իւր հոգին, անցած գլխում մենք տեսանք, թէ ինչպէս նա խաղաղութիւնն էր դրւատում, — իսկ այժմ բոլորովին հակառակ բան ենք տեսնում: Նրա հոգու մէջ սկսում է գործել այն աններդաշնակութիւնը, պօէտի և քաղաքացու այն պայքարը, որ մենք յիշատակել ենք այս գրւածքի ներածութեան մէջ:

Նա ճնմարանի տօնի առիթով զրած ոտանաւորի

մէջ գիտութիւնն է ներբողում, իւր ռազմի երգերում
կոխն ու ըմբոստութիւնն է պաշտպանում, քարոզում է
ազատ հայրենիքի գաղափարը Էջմիածնի հովանու տակ...

Նւ այդպիսով բաճառեղծը դառնում է Շահազի-
ղի աշակերտ այն ժամանակ, երբ նա դադարում է բա-
ճառեղծ լինելուց և դաւաճանում է իւր տաղանդին
և գեղեցկին—սիրոյ և կարեկցութեան երգերին...

III.

Պ Ե Ղ Ե Յ Ի Կ Ը

Մենք տեսանք, որ Յովհաննիսեանը բանաստեղծ է, թէպէտև երբեմն երբեմն քաղաքացին նրա մէջ հանդէս է գալիս աղճատելու գեղարւեստական ներդաշնակութիւնը:

Այժմ պէտք է տեսնենք, թէ ո՞րն է այդ գեղարւեստական ներդաշնակութիւնը, որ յատուկ է միայն և եթ գեղագէտին:

Իւրաքանչիւր բանաստեղծ ունի մի որոշ գեղարւեստական ներդաշնակութիւն կամ հարմօնիա, որ մենք անւանում ենք զեղեցիկ:

Գեղարւեստական ստեղծագործութեան մէջ չկայ տաղանդ առանց գեղեցիկի, ինչպէս որ չկայ գեղեցիկ առանց տաղանդի:*)

Գեղեցիկը այն կենդրոնն է, որի շուրջը համախմբւած են բանաստեղծի բոլոր ապրումներն ու յոյզերը և որի շնորհիւ նա ներդաշնակութիւն է մտցնում մեր հոգու մէջ: Գեղեցիկը տաղանդի ստեղծագործագործու-

*) Այս խնդիրը մանրամասն պարզաբանւած է մեր «Յովհաննէս Թումանեան. Հայրենի եզերքի քնարերգուն» աշխատութեան «Գեղեցիկը եւ տաղանդը» գլխում:

թեան կիդակէտն է։ Եթէ վերջինս մենք չենք կարողանում դանել կամ մեղ համար պարզ չէ նրա բնոյթը, այդ դէպքում մենք անկարող ենք իրազեկ դառնալու բանաստեղծի տաղանդին և հասնատելու նրան։

Գեղարւեստական քննադատութեան ամենակարեւոր աշխատանքը իւրաքանչիւր գեղարւեստագէտի այդ առանձնաշատկութիւնը, գեղարւեստական ներդաշնակութիւնը, ստեղծագործութեան կիզակէտը, մի խօսքով՝ գեղեցիկը ցոյց տալու և մեկնաբանելու մէջ է ամփոփւած։

Սակայն հեշտ բան չէ տաղանդի գեղեցիկը դանելու գործը։ Յաճախ հէնց իրենք գեղագէտները չեն կարող ձեռք մի պարզ բան ասել իրենց գեղեցկի մասին։ Շատ անգամ դուք կտեսնէք, որ տաղանդը դաւաճանում է իւր գեղեցիկին և երգում է այնպիսի երգեր, որոնք չեն համապատասխանում իւր ստեղծագործութեան էութեանը, այսինքն գեղեցիկին։

Այսպէս, օրինակ, Յովհաննիսեանի գեղեցիկը — սէրն է և կարեկցութիւնը. բայց նա թողնում է իւր այդ գեղեցիկը և երգում է ռազմի երգեր, ազատ հայրենիքի գաղափար, ներբողներ էջմիածնական արժէքներին և այլն, և այլն։

Երբ մեղ համար ստոյգ կերպով պարզեց որևէ բանաստեղծի գեղեցիկը, այն ժամանակ մենք իրաւունք ունենք նոյն իսկ պահանջելու որ նա հաւատարիմ մնայ իւր տաղանդին, ստեղծագործութեան ոգուն և անհարազատ, խորթ ու օտար մօտիւններ չհնչեցնի, որովհետև բանաստեղծը իւր գեղեցիկից հեռանալով՝ միշտ իրեն այնպէս է զգում, ինչպէս ձուկը ջրից դուրս։

Բանաստեղծի հոգին բիւրեղանում է միայն իւր գեղեցիկի մէջ։ Անչափ օգտակար է այդ բիւրեղացումը

հասարակական տեսակէտից, որովհետեւ տաղանդը որեւէ խմբակցութեան, հանրական կեանքի ընդգրկումն է, որովհետեւ նրա ապրումներն ու յոյզերը կրթիչ նշանակութիւն ունին, որպէս լաւագոյնը, ինչ որ կարող է լինել մարդկային հոգու մէջ: Այդ իմաստով գեղեցիկը ինքը կեանքն է. և նա անհրաժեշտօրէն համակրելի է և ուսանելի, ինչ էլ որ լինի և ինչպէս էլ լինի, որով հետեւ կենսական լինելով՝ նա առօրեական չէ և հէնց այդ պատճառով բարձրացնում է մեր հոգին:

Այժմ տեսնենք, թէ մեր է Յովհաննիսեանի գեղեցիկը, այսինքն նրա գեղարւեստական ներդաշնակութիւնը, որով մեր հոգու մէջ նա մտցնում է խաղաղութիւն և հարմօնիա՝ սիրել տալով կեանքը և գերազանցօրէն մարդկայինը:

Յովհաննիսեանը իւր երկերի ժողովածուն հրատակեց 1908 թ. Այդ ժողովածւի առաջին երեսում նա գրել է հետեւեալ մօտաօն:

Միայն այն կապրի, որ միշտ է անմահ—
Սուրբ գեղեցկութիւն և սուրբ զաղափար.
Վեհ միտքը ազատ կենդանի կը մնայ
Ու սէրն անձնազոհ՝ խեղճ եղբօր համար...

Այս քառեակը նա գլխի է իւր բանաստեղծութիւնների 1887 թ. հրատարակութեան՝ ընկերներին ձօնաժոտանաւորից, որ կրում է «Ընկերներիս նւիրում եմ առաջին գրականական փորձերս» վերնագիրը: Այդ ոտանաւորը բաղկացած է երեք տնից: Բանաստեղծը դէն է ձգել առաջին երկու տունը և նոր հրատարակութեան մօտաօ գարձրել վերջին քառեակը:

Յիշեալ ոտանաւորի ծագման մասին պ. Մ. Բար-
խուդարեանը հետեւեալն է պատմում. «... Յովհաննիսեա-
նը այնքան էլ չէր ախորժում դրականական ընկերու-
թեան նիստերին կարգ ալ իւր բանաստեղծութիւնները.
նա այդ անում էր աւելի նեղ մտերմական շրջանում,
և այդ նեղ շրջանում յղացաւ նրա բանաստեղծութիւն-
ները առանձին գրքով հրատարակելու միաքը: Գրակա-
նական ընկերութեան*) դրամարկղում համարեա ոչինչ
չկար, իսկ գրքի տպագրութիւնը մի քանի հարիւր ռուբլի
ծախք էր պահանջում: Պէտք էր դիմել մասնաւոր հան-
գանակութեան: Բայց որովհետեւ անյարմար է մէկի ան-
ւան շուրջը դործ սկսել առանց նրա գիտութեան և հա-
ւանութեան, ուստի ծածուկ հաւաքեցաւ անհրաժեշտ
գումարի մի մասը և ապա միայն որոշեցաւ յայտնել
նրան մեր գիտաւորութիւնը: Չեմ յիշում, ճշմարիտ, թէ
ինչտեղ էինք հաւաքեած այդ նպատակով, բայց գիտեմ,
որ այնտեղ մենք նրան ոչինչ չասացինք և միայն
կէս զիշերից անց, երբ Նեգլիննիյ բուլւարով անցնում
էինք և գնում գէպի Յվէտնոյ բուլվարի կողմը, ուր
Յեանի բնակարանն էր, մեզանից մէկը յայտնեց նրան
մեր որոշումը: Հազիւ յայտնողը վերջացրեց իւր խօս-
քը, լսեց Յովհաննիսեանի հեծկլտանքը: Մեզանից
մի քանիսը չհասկացան այդ արտասուքի նշանակու-
թիւնը և շշկուեցան, միւսները հանգստացնելով նրան,
սուն տարան: Եւ Յով. Յովհաննիսեանը, որպէս շնոր-
հակալութիւն, իւր առաջին փորձերը ընկերներին նւի-
րեց»:

*) (Այդ ընկերութիւնը Լազարեան ճեմարանցիներն էին
հիմնել 80-ական թւականներում):

Ահա թէ լերեւ յիշատակած քառատողը ինչ յուզմունքից յետոյ է դրւած: Յովհաննիսեանը լաց է եղել, հեծկլտանք է բարձրացրել իւր ընկերների սիրոյ հանդէպ, և ապա գրել է ոտանաւոր նրանց նւիրւած: Սակայն երեք տնից բաղկացած այդ ոտանաւորի առաջին երկու տունը իսկապէս թոյլ է, և բանաստեղծը իրօք զգալով այդ՝ կրճատել է նոր հրատարակութեան մէջ: Այդ կրճատման պատճառը դժւար չէ բացատրել: Յովհաննիսեանը 1908 թ. իւր ժողովածւի մէջ չի մտցրել և այլ ոտանաւորներ—երևի, մեծ մասամբ պատւէրով գրւած բաներ, ինչպէս, օրինակ, Ս. Մանդինեանի մանկավարժական յօրելեանի առթիւ յօրինած ոտանաւորը, որ նոր ժողովածւի մէջ չկայ, բայց տպւած է 1900 թ. «Տարագում»: Դժւար է, յիշուի, այն ոտանաւորների դրութիւնը, որոնք գրւում են դրսի ճշման տակ, երբ բանաստեղծը պարտաւոր է զրել և չի կարող չգրել: Այդպիսի դէպքում հարկաւոր չէ, որ մասնաւոր պատւէր ստացած լինի բանաստեղծը թէ՛ «գրիւր մի ոտանաւոր»։

Գործը թոյլ դուրս կղայ և պրօզայիկ, երբ այդ պատւէրը բանաստեղծի զիտակցութիւնն է տալիս, թէ մի բան պիտի գրել և անյարմար է լուռ մնալ: Թոյլ տւէք այս վերջին վիճակն անւանել հոգեբանական պատւէր: Յովհաննիսեանի ստեղծագործութիւնը ընդհանրապէս հէնց այս հոգեբանական պատւէրն է աղճատել, այդ ներքին պարտաւորւածութիւնը: Երբ թւում է թէ ոչ մի ճշում չկայ դրսից, բայց հոգեկան կաշկանդումն ակնհերե է բանաստեղծի անգիտակցական աշխարհի մէջ՝ գրելու ժամանակ—ահա հէնց այդ ինտիմ կացութիւնն է, որ մենք ուրիշ խօսքով կարող ենք անւանել սառն դատողութեան հարկադրանք տաղանդի ներշնչման վրայ:

Յովհաննիսեանը բարերարւած է զգացել իւր ընկերների հանդէպ և ուզեցել է վարձահատոյց լինել և դուրս է եկել հոգեբանական պատւէրի ճնշումը՝ արւեստակեալ կերպով գրւած երկու տուն ոտանաւոր։ Սակայն վերջին քառատողը, որի բանի նման լինելը գնահատել է և Յովհաննիսեանը, անկեղծ, անխառն զգացման մի ցայտուն արտայայտութիւն է. դա այդպէս չէր լինի, եթէ բանաստեղծը հոգեբանական պատւէրի հետ միասին մի բարձրագոյն յուզմունք չապրէր — հեծկլտանքը...

Այդ հեծկլտանքն է, տաղանդաւոր և խորունկ հոգուց բղխած մրմուռն է, որ ստեղծել է մի յաջող քառեակ, որի մէջ ամփոփւած է Յովհաննիսեանի ստեղծագործութեան «հաւատոյ հանգանակը» — նրա գեղեցկի էութիւնը։

Միայն այն կապրի, որ միշտ է անմահ —
Սուրբ գեղեցկութիւն և սուրբ գաղափար.

Տաղանդաւոր մարդը ներշնչուած է կեանքից։ Բայց, իհարկէ, կեանքն իւր ամբողջութեամբ չի կարող ներշնչման աղբիւր լինել։ Կան տարբեր դասակարգեր, հակոտնեայ շահեր, որոնք չեն կարող մի մարդու մէջ հաւասարապէս պաշտամունքի առարկայ դառնալ։ Եւ, իսկապէս, տաղանդը կեանքի մի որոշ մասը, մի յայտնի կողմն է պաշտամունքի առարկայ դարձնում։ Կեանքի այդ կողմը տաղանդի համար և յարգելի է, և սիրելի։ Յարգելի է մեր աչքում այն ամենը, ինչ որ օրիէկտիւ արժէք ունի և մենք խոստովանում ենք այդ արժէքաւորութիւնը՝ բոլորովին անկախ այն բանից, թէ ընդունում կամ ժխտում ենք այդ արժէքը։ Իսկ սիրելի է

այն, ինչ որ բացառապէս սուրբէկտիւ արժէք ունի մեղ համար. այսինքն մենք մեր էութիւնը չենք անջատում սիրելիից, հոգեպէս միանում ենք նրա հետ:

Կեանքի այն մասը կամ կողմը, որի արտայայտիչն է գեղագէտը, ասացինք, միաժամանակ և յարգելի է, և սիրելի: Թւում է թէ մի ինչ որ հակասութիւն կայ այս որոշման մէջ: Սակայն դա միայն թւում է, իսկ իրօք ոչ մի հակասութիւն չկայ: Բանաստեղծը տաղանդ լինելով՝ չի դադարում, ի հարկէ, մահկանացու լինելուց: Նա էլ նոյնպիսի մարդ է, ինչպէս որ մենք—հասարակ հոգածիններս: Նա տաղանդ է միայն ողևորութեան ժամերին, իսկ ողևորութեան այդ ժամերից դուրս, ինչպէս Պուշկինն է ասում. «Ունայն աշխարհի հոգսերի միջին թաղած է երգիչն անխանդ, անուախն»: Բանաստեղծը յարգանք է տածում դէպի իւր հասարակութեան մօտը—դէպի կեանքի այն կողմը, որի երգիչն է ինքը, սոսկ այդ «անխանդ» և «անուախն» վիճակում: Նա սիրել է սկսում ողևորութեան ժամին, երբ նրա մահկանացու էութիւնը շոգիւսնում է և նա յուզւում է հոգեբանօրէն մի մեծ ամբողջի հետ: Նրա այդօրինակ վիճակն է ահա, որ մենք անւանում ենք ողևորութիւն կամ, աւելի ճիշտ՝ ներշնչում: Ներշնչման ժամին բանաստեղծն ապրում է ինքն իրենից դուրս, մի աշխարհում, որ մենք անւանում ենք նրա հայրենի եղերքը: Իւրաքանչիւր բանաստեղծ ունի իւր հայրենի եղերքը: Ահա հէնց այդ հայրենի եղերքն է, որ մենք կոչում ենք գեղեցիկ: Բնութիւն երգող բանաստեղծի հայրենի եղերքը հէնց այդ բնութիւնն է, բայց շփոթութիւն չառաջացնելու համար մենք այդ տեսակ երգչին անւանում ենք բնապաշտ: Սա բնութիւնն է պաշտա-

մունքի առարկայ դարձնում, իսկ հայրենի եզերքի քնարերգուն մի որոշ մարդկային խմբակցութիւն:

Ինչ որ պաշտամունքի առարկայ է դառնում, հոգեբանօրէն անմահ է համարւում: Իւրաքանչիւր բանաստեղծ իւր գեղեցիկն անմահ է դարձնում ճիշտ այնպէս, ինչպէս կրօնական բնաւորութիւնը — իւր Աստծուն: Կրօնի և գեղարւեստի կապը հէնց այդ անմահութեան պաշտամունքի մէջ է ամփոփւած: Ինչ որ անմահ է, հասկանալի է, որ սուրբ պիտի լինի: Այնքան պարզ է դա, որ առանձին մեկնութեան կարիք չկնք զգում:

Այժմ հետաքրքրական է տեսնել թէ ռոն է Յովհաննիսեանի սուրբ անմահութիւնը, որ նոյնն է թէ գեղեցիկը:

— Գեղեցկութիւն և գաղափար:

Առաջին հայեացքից չափազանց անորոշ է թւում, թէ դա ինչ «գեղեցկութիւն» և ինչ «գաղափար» է, որոնք ի միասին Յովհաննիսեանի ստեղծագործութեան էութիւնն են կազմում կամ, աւելի ճիշտ, նրա գեղեցիկը:

«Տիրամայր» ոտանաւորի մէջ մեր բանաստեղծը բացադրել է աւելի մեկին կերպով, թէ ի՞նչ է հասկանում «գեղեցկութիւն» ասելով: Դուրս է գալիս, որ գեղեցկութիւնը և կենդանի սէրը նոյնանիշ հասկացողութիւններ են Յովհաննիսեանի համար:

Պայծառ ամպերի, հրեշտակների մէջ
Կանգնած ես երկնից փառաց թազուհի,
Պսակւած լուսոյ պսակով անշէջ,
Դու կարեկցութեամբ երկրիս հովանի:
Մաքուր բերկրութեամբ լի է իմ հոգին.

Ծունկ եմ խոնարհում ահա քո առաջ,
Սուրբ գեղեցկութեան տիպար երկնային,
Կենդանի սիրոյ մայր լալահառաջ...

Կենդանի սէրը, որպէս ս. գեղեցկութիւն, ներշնչում է Յովհաննիսեանին այն ժամանակ, երբ նա, ինչպէս հէնց ինքն է ասում, հետու է աշխարհի աղմուկից, ականջն ազատ մարդկանց շշուկից: Աշխարհի այդ աղմուկն ու մարդկանց շշուկը՝ ունայն հոգսերի, անմիտ ու դատարկ զարճութեան և առօրեայ փառքի հանդէսն են առաջ բերում, ուր կեանքի մրցութիւնն է տիրում, և սիրոյ բարբառը չի լսւում, որպէս ս. գեղեցկութեան արձագանք: Կեանքի առօրեայ մըրցադաշտի վրայ բանաստեղծի հոգին կաշկանդւած է, մանրացած: Մտքի, զգացմունքի և կամեցողութեան ազատ խոյանքների համար պէտք է թողնել ապրումների վայրկեանականութիւնն և ընդգրկել մտքի վեհութիւն, որ ըստ ինքեան ազատ է ներքին կաշկանդումներից և հէնց իւր այդ յատկութեամբ է, որ ստեղծում է անմահ արժէքներ, որոնք կենդանի են մնում դարէ ի դար:

Վեհ միտքը ազատ կենդանի կը մնայ.

Այդ տողին հետևում է մի ուրիշը, որ աւելի պարզ ու յստակ կերպով մեկնում է թէ ի՞նչ է հասկանում Յովհաննիսեանը սուրբ «զաղափար» ասելով.

Ու սէրն անձնագործ խեղճ եղբօր համար...

Սէրը դէպի եղբայրը կամ մերձաւորը— դա կարեկցութիւնն է, որ նոյնպէս մի իղէալ է, զաղափար է մեր բանաստեղծի համար, որովհետև նա առօրեայ

կեանքում, աշխարհի մրցումների մէջ չի ճաշակում այդ
կարեկցութեան քաղցրութիւնը:

Մենակ առ ցայ կարօտ գլանքի,
Փորձով ևս ուսայ խորհուրդը կեանքի,
Օրըս սևացաւ այրւող կրքերից,
Զգտայ երբէք մի սիրտ կարեկից:

Իսկ երբ որ բանաստեղծը հեռանում է աշխարհիկ
մանրունքից և ունկնդիր է դառնում կենդանի սիրոյ
բարբառին, նա կարգում է ամեն մի հայեացքի մէջ—
կարեկցութիւն.

Գետեմ, ողբում է այդ սիրող հոգին
Արեան մէջ խեղդւող մարդկութիւնն անկեալ:

Արեան մէջ խեղդւող մարդկութիւնը, ինչպէս բա-
նաստեղծն է ասում, զուրկ է սիրոյ ջերմութիւնից, նա
խռովեալ հոգու և անխաղաղ կացութեան մրցահանդէս է
ներկայացնում.

Ա՛խ, ևս կուզէի հանգչէին կրքեր
Գէթ վերածնութեան այս վսեմ պահուն,
Երբ շողշողում են ոսկեվառ յոյսեր,
Թ՛ղում են սրտեր ցնորքներով անհուն:

Կուզէի տեսնել եղբայրն եղբօր հետ
Գեղեցիկ զործում ձեռք ձեռքի տւած,
Սէր և հաշտութիւն իրենց կարապետ,
Եւ սուրբ համբոյրով ի մի շաղկապւած...

Այդպիսով մեզ համար պարզւում է թէ ինչ էք

ուզում հասկացնել բանաստեղծն իւր սուրբ գեղեցկութեամբ և սուրբ գաղափարով:

Յովհաննիսեանը սիրոյ եւ կարեկցութեան երգիչն է:

Այս մեզ փնտում է մեկնել, թէ ի՞նչ կապ և առնչութիւն կայ սիրոյ և կարեկցութեան մէջ:

Բայց նախ քան այդ տեսնելը, աւելորդ չէր լինիցոյց տալ, որ մեր բանաստեղծը բնապաշտ չէ, նրա վերաբերմունքը դէպի բնութիւնը սիրադին չէ, այսինքն նա չէ ուզում բնութեան մէջ անէանալ, նրա անմահութեան հետ կցորդւելով ներշնչման վարկեաններին:

Բնութիւնը նրա մէջ չի յարուցանում անմահութեան դպացումներ, ինչպէս Վահան Տէրեանի և տիկին Սիպիլի*) մէջ:

Բնութիւնը չի կազմում այդպիսով նրա գեղեցկի տարերքը, և բանաստեղծի ստեղծագործութեան մէջ հանդէս է գալիս որպէս մի ֆօն, որի վրայ գծադրւում են նրա ներքին յոյզերը: Բնապաշտ բանաստեղծների մօտ բնութիւնը բոլորովին այլ երևոյթով է հանդէս գալիս. բանաստեղծն իրեն համարում է բնութեան մի անբաժանելի մասնիկը և նրա իւրաքանչիւր փթթումին արձագանք է տալիս, ապրում է նրա հետ և նրա շնչի տակ. արևի ճառագայթ դառնալ և անէանալ—ահա նրա տենչանքը, նոր, աւելի բարձր կեանքով ապրիլու իդէալը: Յովհաննիսեանն, ընդհակառակ, իրին անջատում է բնութիւնից և դիտում է նրան հեռից իբրև մի խորթ երևոյթ, որին արժէք է տալիս, որը շարժում է նրա

*) Տես մեր յօդածը Սիպիլի մասին («Հորիզոն» լրագիր, 1911 թ. 141—2 №№-ը):

նախանձն իւր յաւիտենականութեամբ. և երբեմն էլ չի հրաժարուում նրա պէս յաւերժական լինել, բայց և այնպէս նա գիտէ, որ ինքը և բնութիւնը մի չեն:

Եւ ես կանգնած եմ ահա բնութեան
Հրաշալեաց առաջ, մոլորւած մտքով.
Ձէ, ինձ համար չեն այս գեղեցկութեան
Բոլոր հրապոյրներ իրենց պատրանքով...
Հողիս լի ցաւով՝ նայում եմ միայն,
Թէ՛ սուր են թռչում սրընթաց ավիք,
Եւ դէթ պիտի տան ինձ մի պատասխան
Սլացող կեանքիս գոհակներ գալիք:

«Սլացող կեանք»... Ահա Յովհաննիսեանի միակ, միակ վախը, նրա սարսափահար հոգեկան կացութիւնը իւր ջանելութեան կորստի հանդէպ՝ Նա անմահութեանը չի հաւատում. մահը—մահ է, նա նոր դռներ չի բաց անում, նոր կեանքի չի կոչում: Ինչ որ կ'այ, այս կեանքի մէջ կ'այ միայն, բայց հրանի՛ թէ այս կեանքը յարատեւ լինէր, սակայն ջանելութեան օրերով հանդերձ...

Ամեն անգամ, երբ նա բնութեան յարատեւութիւնն է գիտում, նրան «պաշարում են տխուր երազներ» և «միտքը սքօղում են երկբայութեան ամպով»:

Ինչո՞ւ կարող ես դու մահու քողով
Ծածկել ու քնանալ անշուք ու լռիկ
Եւ յառնել դարձեալ, երբ իւր ջերմ շողով
Խաղայ ճակատիդ արևը գողտրիկ.
Իսկ մեզ՝ որ չունենք գգւանքը կենաց,
Գրկում է շիրիմն անդամը, յաւիտեան,
Անպիկը՝ գիշերում առնում է վախճան...

Այս մեկին և պարզ տողերից յետոյ, որոնք ցայտուն կերպով ցոյց են տալիս, թէ ինչ ապրումներ են յուզում բանաստեղծի հոգին, Յովհաննիսեանն աւելացրել է մի քանի անհարազատ տողեր, որոնք չեն ներդաշնակում նրա ստեղծագործութեան ընդհանուր ոգուն: Նա գերեզմանը համարում է անդարձ և յաւիտենական կորստի խորհրդանշան և դրանից յետոյ, հոգեբանական ինչ որ անհեթեթ ցատկումով, գոչում է «կայ անմահութիւն»...

Այսպէս ուրեմն, մեր համոզումով, Յովհաննիսեանի պսիխիկան անհաղորդ է անմահութեան ապրումներին այն չափով, ինչ չափով դա վերաբերում է բնութեան մէջ անէնալու և վերստին յառնելու ձգտումին: Ինքնավերադարձի յոյսը նրա հոգու մէջ տեղ չունի...

Եթէ դա այդպէս չլինէր, դժւար թէ նա կարեկցութեան երգեր կարողանար ասել տաղանդաւոր կերպով: Կարեկցութիւնը հոգեբանօրէն ժխտում է անմահութեան գաղափարը: Մենք կարեկցում ենք նրան, որի ստեղծագործական ընդունակութեանը չենք հաւատում, որին համարում ենք թոյլ և դատապարտած կորստեան անվերադարձ կերպով: Եւ ընդհակառակում որ համարում ենք ուժեղ, ստեղծագործութեան ընդունակ և անմահութեան արժանի—մենք նրան սիրում ենք և ոչ թէ կարեկցում:

Այսպէս ուրեմն, սիրոյ և կարեկցութեան մէջ կայ սկզբունքային խոր տարբերութիւն: Սակայն ինչպէս է, որ մենք Յովհաննիսեանին համարում ենք այդ հակոտնեայ, միմեանց ժխտող ապրումների և յոյսերի երգիչ: Զէ որ դա հակասութիւն է և այն էլ ծանր հակասութիւն:

Թոյլ աւէք բացատրել, որ այստեղ ոչ մի հակա-
ռութիւն չկայ:

Յովհաննիսեանի յարձանատիութիւն է: Եթէ
նա մի ուրիշին սիրում էլ է, ոչ թէ հէնց այդ ուրիշի
համար է սիրում, այլ իրեն՝ իւր սեպհական բաւակա-
նութիւնների և հաճոյքի համար:

Այդ տեսակ սէրը կոչւում է էգօրիզմ:

Էգօրիզմի և կարեկցութեան միջև սկզբունքային
տարբերութիւն չկայ, ընդհակառակ, նրանք միմեանց
սլայմանաւորում են և մէկն առանց միւսի անըմբո-
նելի է: Կարեկցութիւնն անձնազոհութիւն չի պահան-
ջում. ում ապագային մենք չենք հաւատում, մենք նրա
համար անձնազոհութիւն էլ չենք անում: Եւ որովհե-
տե մենք կարեկցում ենք նրան, ում որ համարում ենք
թոյլ, ստեղծագործութեան անընդունակ և դատապար-
տւած կորստեան—շատ բնական է այնուհետեւ, որ մենք
հոգեբանօրէն անկարելի պիտի դտնենք անձնազոհու-
թիւնն այդպիսի մէկի համար: Անխորհուրդ կերպով
կենսական էներգիայի վատնում երբէք չի կատարւում
աշխարհի մէջ...

Յովհաննիսեանը հաւատում է ինքն իրեն, իւր
ստեղծագործական կարողութեանը. «ուրիշներին» նա
կարող է միայն կարեկցել, բայց սիրել չի կարող:

Լուս կաց, սիրտ եմ. ուրիշներին
Ամսոս է մեր ցաւն յայտնենք.
Դարդն ընկեր է մեզ անմեկին,
Մինչ գերեզման կը տանենք:

Յովհաննիսեանի սիրոյ և գուրգուրանքի առարկան ինքն է:

Ինքնութիւնն է նրա սէրը. հէնց այս պատճառով էլ մենք նրան սիրոյ երգիչ ենք համարում, որովհետեւ բանաստեղծն ինքն էլ սէր առելով հասկանում է ինքնասիրութիւն, մի այլ սիրոյ հնարաւորութիւն անկարելի համարելով:

Ի՞նչ է հետեւում մեր բոլոր ասածներից:

Յովհաննիսեանը բնապաշտ չէ: Ուրեմն, կնշանակի նա հայրենի եղերքի քնարերգու է, բայց նրա հայրենի եղերքը ոչ թէ ուրիշներն են կազմում, այլ հէնց ինքը—նա սիրում է միայն իրեն:

Ինքնութիւնն է նրա հայրենի եղերքը:

Բայց ի՞նչ տեսակ ինքնութիւն է դա:

Յովհաննիսեանի ինքնութիւնն ունի էգոիստական բնոյթ, ինչպէս քիչ վերեւ նկատեցինք: Բացի դրանից նրա ինքնութեան հետ շաղկապւած է կարեկցութիւնը:

Այդ երկու հանգամանքն էլ նրա ինքնութեանը տւել են կասկածոտ, երերուն բնաւորութիւն: Այդպիսի տատանւող կուսնի վրայ յինւելով՝ նրա աստեղծագործութիւնը հասարակականօրէն տանում է դէպի անմահութեան ժխտումն, որ նոյնն է թէ կարեկցութիւն, իսկ սիրոյ մէջ առաջնորդում է դէպի մարմնապաշտութիւն ի միաս իսկական սիրոյ, որ պահանջում է անձնագոհութիւն յանուն անհունութեան և յաւերժութեան, յանուն աւելի բարձր կատարելութեան, քան էգոիզմն է...

Աւետիք Իսահակեանը, որ Յովհաննիսեանի աշակերտն է, իւր ուսուցչի գործն առաջ տարաւ՝ ժխտե-

յով կարեկցութեան և սիրոյ հակասութիւնը, մի եղա-
կի պաշտամունքի երգիչ դառնալով:

Նա ևս իւր ստիճադոճութեան սկիզբը գրեց
ինքնութեան վրայ, բայց այնուհետև գնաց դէպի
սոսաջ և դարձաւ սիրոյ երգիչ: Նրա սրտի բոլոր լարե-
րը կտրւում են.

Միակ սիրոյ լարը մնաց
Սրտիս անհուն խորքերում.
Ու վառ սիրոյ երգը շողաց
Կեանքիս ամեն ծալքերում...

Սիրոյ, մէն միակ սիրոյ երգիչ դառնալով, նա
սկսում է երգել անմահութիւն այն ժամանակ, երբ
իւր ուսուցիչն ասում էր, թէ բոլորի վախճանն է
«միայն թիզ հող վերջին հանգստեան»

Աւետիք Իսահակեանը հիւսում է իւր ինքնութիւնը
տիեզերքի հետ.

Եւ երազ մի վան, շքեղ, սուրբ և վեհ
Այս հող-երկրից հողիդ թոցնէ.—
Կարօտով ձգտիր աստղերին անշէջ
Եւ մեռիր աստղէ-ոլորտների մէջ...

Սիրոյ այդ բարձր անձնազոհութեան հետ չի հաշտ-
ւում էգօստական կարեկցութիւնը. Իսահակեանը հե-
տեողական մնալով իւր ներշնչումի թիւադրանքներին,
ժխտում է կարեկցութիւնը, որպէս անմահութեան ապ-
րումների համար խափանիչ մի աշխարհայեացք.

Աշխարհը չարժէ քու արտասուքին

Եւ կի՛նն ու ընկեր՝ զգլանքիդ այդ ծով,—
Անապատ զնա—սիրիւր վագրերին,
Եւ այլւիւր անմահ արեւի սիրով...

Այս բոլորից յետոյ ընական է, որ Ա. Իսահակեանի ինքնութիւնը ազատւում է Յովհաննիսեանի ինքնութեան հրերուն և կասկածոտ ընոյթից, որովհետեւ նրանից զատւում, վտարւում են էգօրէմն ու կարեկցութիւնը, և նրանց փոխարէն հանդէս է բերւում սիրոյ անձնազոհութիւնն անմահութեան տենչանքներով: Նրա սիրոյ մէջ փայլում է արեւի ճառագայթը, նրա սէրն ուղղւում է դէպի վաղւան մարդը՝ հրեա թեքելով հոգու և մտքի հաշմանդամներից, որոնց չի կարելի սիրել, այլ կարեկցել հարկաւոր է...

Բանաստեղծը չի կարող մարդկային տիպի վարէջքի հանդէպ քնքոյշ զգացումներ տածել և ահա նրանց երեսին նա շարժւում է իւր խրոխտ և համարձակ ինքնութեան խօսքը.

Ծնւել է հոգին յարւէժ մենաւոր...

Բայց դա, ինչպէս նկատեցինք, էգօրստական մենաւորութիւն չէ: Մի մենաւորութիւն, որ սիրուց է առաջանում և փափագում է անձնազոհութեան, էգօրիզմ չէ: Այդ մտքով միայն կարելի է Ա. Իսահակեանին սիրոյ երգիչ համարել, միաժամանակ խոստովանելով, որ նրա սէրը բղիւղում է մի ինքնութիւնից, որ անհաղորդ է կարեկցութեանը և մարմնապաշտութեանը.

Եւ տիւ և գիշեր ես սպասում եմ,
Թէ ահա կը գայ կոյսը դիւթական,
Որ զարթնած հոգով երգեմ վեհօրէն

Նրազս շքեղ, մարգարէական...

Դա հէնց այն հոգեղէն, իսկական սէրն է, որ պա-
կասում է Երվաննիսե նի մօտ:

Դա այն սէրն է, որ ժխտում է էգօրեմը:

Ժխտելով էգօրեմը, նա միևնոյն ժամանակ ոչ մի
զործ չունի կարեկցութեան հետ, որովհետև նոր, աւելի
բարձր և վեհ կեանք ստեղծելու համար կարեկցութիւ-
նը դեր չունի կատարելու և նա պէտք է տեղի տայ մի
համայնապարփակ և ստեղծագործութեան ազդակ կազ-
մող յոյզի. —

Այդ յոյզը սէրն է...

IV.

Ս Ի Ր Ո Յ Ե Ր Ք Ե Ր

Խնքնասէր մարդիկ միշտ կարիք են զգում փայ-
փայանքի ու գուրգուրանքի։ Նրանց ամենամեծ դժբախ-
տութիւնն հէնց այնտեղ է սկսւում, ուր որ զգում են
իրենց բոլորովին մենակ։ Խնքն իրեն սիրելով՝ ինքնա-
սէրը միևնոյն ժամանակ, ի հարկէ, ինքնազոհ չէ դառ-
նում։ Յաճախ հակառակն է պատահում։ Խնքնասիրու-
թիւնը ըստ մեծի մասին հանդէս է գալիս ծանր ինք-
նադժգոհութեան հետ միասին։ Սա մի կնճառոտ հոգե-
բանական խնդիր է, որի պատճառները բազմակողմա-
նի են և մի թուղցիկ տեսութեան մէջ դժւար է սպա-
ռել այդ պատճառների քննութիւնը։

Հէնց այն հանգամանքը, որ մարդս հասարակա-
կան կենդանի է, որ նա մշտապէս կարիք է զգում ու-
րիշի գոյութեանը և եթէ այդ ուրիշը չկայ սկսում է
փայփայել մինչև անգամ անասուններին, իսկ երբեմն էլ
անշունչ առարկաներին—ասում ենք, հէնց այդ հանգա-
մանքը բաւական է արդէն հասկանալու ինքնասէր
մարդկանց հոգեկան ողբալի վիճակը։

Դրանք միշտ զգում են հոգու դատարկութիւն,
որից առաջանում է և այն ինքնադժգոհութիւնը, որի
մասին ակնարկեցինք։

Ուղղում են սիրելի, բայց չեն կարողանում. և նրանց մէջ սիրոյ կարօտը յաճախ հասում է իսկական սիրոյ խարուսիկ երեոյթին:

Մեր ասածներէից սրբէք չի հետեւում, որ այդպիսի մարդիկ բնաւ անհաղորդ են սիրոյ զգացումին: Ոչ. կարող է այդ զգացումը նրանց մէջ հանդէս գալ, բայց անցողիկ, ոչ մի խոր հետք չթողնող և կեանքի ազդակ չկազմող երևոյթով միայն:

Յովհաննիսեանի ստեղծագործութիւնը հոգեբանական մի անսպառ շտեմարան է այդօրինակ մարդկանց ըմբռնելու և հասկանալու համար: Ոչ մէկը մեր բանաստեղծներից չի կարողացել այնպէս լաւ երգել ինքնասէր և ինքնադժգոհ մարդու հոգեկան դրաման, ինչպէս մեր տաղանդաւոր երգիչը: Նրա իւրաքանչիւր բառը, իւրաքանչիւր խօսքը ստանում են առանձնապէս անհուն իմաստ, երբ մեզ համար պարզւում է հոգեբանական այն հիմնաշէնքը, որ ծնել է հէնց այդ բառն ու խօսքը:

Յովհաննիսեանի մեծ ժողովրդականութիւնը կարելի է բացատրել նրանով, որ նա «շատերի» երգիչն է. ներկայ հասարակարդն է նրան ծնել, մի հասարակարդ, ուր ինքնասէր և ինքնադժգոհ մարդիկ շատ շատ են, նրանց ծնունդը պայմանաւորող պատճառներն—անթիւ:

Ճիշտ է, քնարերգուն երգում է անձնական զգացումներ: Բայց այդ հանդամանքը մեզ չպէտք է մոլորեցնի: Տաղանդը որոշ հանրական ամբողջի բերանն ու արտայայտիչն է: Նա միշտ երգում է իւրայինների կեանքն ու տենչանքները: Նա հանդիսանում է իւր տաղանդով իբրեւ իւրայինների կատարելատիպը:

Ուստի և անտեղի չի լինի, եթէ ասելու լինենք, որ

Յովհաննիսեանը երգել է իւր ժամանակակից մարդկանց յատկանշող սէրը, հարազատ արտայայտիչ հանդիսանալով նրանց ապրումներին: Հակառակ դէպքում նա իսկի տաղանդ էլ չէր լինի:

Տեսնենք այդ մարդկանց հոգեբանութիւնն ինչ է ներկայացնում:

Ինքնասէր և ինքնադժգոհ լինելով, շատ բնական է, որ այդպիսի մէկը զգայուն պիտի լինի դէպի ամեն ինչ, պէտք է սրտին մօտ առնի ամեն բան: Հէնց այստեղից է, որ առաջ է գալիս տրտնջալու սովորոյթը, «բաղտն իբրև խորթ մայր» և «կեանքի բաժակը դառն թոյնով լի» ներկայացնելու հակումը:

Բայց նա հաւատում է. հաւատում է խորապէս, որ այդ՝ այդպէս չի մնայ.

Կ'ը գայ և մի օր քո վառ արշալոյս,
Դու կ'ը մոռանաս անցեալի ցաւեր,
Խաղաղ վիճակի կը ցոլայ քաղցր յոյս
Ողևորութեան կը հոսեն արցունքներ...

Սա շատ ճիշտ և անկեղծ խոստովանութիւն է: Այդպիսի մէկը ինչ բանի նկատմամբ էլ չոր ու անսիրտ լինի, բայց անընդունակ չէ լաց լինելու մէջ: Նրան հեռացրու առօրեայ աշխարհից և ձգիւր ցնորքների գիրկը—և ահա թէ լաց կ'լինի և թէ կողկորկի:

Ողևորութիւնն առաջ է գալիս միշտ ախտեղ, ուր մի հոգի գրկում է միւսի հոգեկան վիճակը ներքուստ և լցւում է դիմացինի ապրումներով:

Տեսն' ևս, քուրիկ, երբ գոռ փոթորիկ

Փչում անադին և մատաղ թփեր
 Խիստ տատանում է, նոքա իրար զիրկ
 Դիմում են սիրով, ասես, այդ լինէր
 Փրկութեան նքոյթ մի պատապարան...
 Բայց հողմը ուժգին բաղխում է նոցա,
 Եւ անա կրկին իրարից բաժան
 Իրանց չար բախտը ողբում են նոքա:

Ոգևորութիւնից յետոյ սկսւում է նոյն պաղ հո-
 գեկան կացութիւնը, որ մի փոքր ժամանակով դուրս
 էր եկել իւր ինքնայատուկ եղերքից և գրկել մի ուրիշ
 հոգու: Սկսւում է առօրէական կեանքի անց ուղարձը,
 որ երերուն մի վիճակ է ներկայացնում, ուր վխտում
 են անցողիկ կրքեր և խաւարի մէջ տանջում են ան-
 քսիտի հոգիներին:

Քանի տանջւելով ծանր բռնի տակ,
 Ծնւած պիտոյքիցն առօրէական,
 Դարձնում եմ աչքս այն ջինջ, կապուտակ
 Երկնքի վրայ անցած մանկութեան...

Ի՞նչ միջոց գիտէ տանջողը փրկւելու համար:
 Սէրը, միայն սէրը կարող է մի առ ժամանակ դուրս
 բերել այդ լքեալ վիճակից և հասցնել մարդուն երջան-
 կութեան գագաթը՝ քաղցր յոյսերով կեանքը սիրել
 տալով:

Բայց ներկայ կեանքի մէջ և ներկայ հասարակարգի
 դրոշմն իր վրայ կրող սէրը չի կարող սփռիլ առօրէ-
 ական պիտոյքի ծանր բռնան տակ տանջողին: Ի՞նչու,
 որովհետեւ ներկայ աշխարհը ինքը ներդաշնակած չ'ի-

նելով, չի էլ կարողանում ներդաշնակ սէր ծնել, որ անմահ ու անվախճան լինի ըստ ինքեան: Եւ միշտ այդ աշխարհը սպասում է, սպասում է ամեն օր թէ անհ կ'ծագի ինչ որ հրաշքով այն մեծ ու անվախճան սէրը, որ ծնել չի կարողանում արդի հասարակական կազմը: Եւ շատ բնական է, որ այդ սպասումներն ունեն կրօնական բնոյթ և հանդէս են դալիս միայն քրիստոնէական տօների առիթով: Յովհաննիսեանը Զատիկին հետեւեալ խորհրդածութիւնն է արել.

Եւ կենսաբոյր այս վառ դարնան
Գեղեցկութիւնն ոգելից
Կամի յուսալ մի սլառասխան
Ներդաշնակ խօսք աշխարհից:

Բայց խռովայոյզ միտքը մարդկան
Ըսպասում է այն օրին,
Երբ սէրը մեծ ու անվախճան
Պիտի յառնէ վերստին:

Սպասում է «մեծ և անվախճան սիրուն» ինքնասէր և ինքնադժգոհ հոգին: Սակայն հեռու է այդ սէրը և միմիայն վաղանցուկ ցնորքների մէջ է հանդէս գալիս. մի փոքր ժամանակով ոգևորութիւն է առաջ բերում և ապա մի անգամ ընդ միշտ թաղում՝ այլևս չ'յառնելու համար:

Ասպարէզը մնում է բաց մի այլ սիրոյ համար: Դա չ'ներդաշնակած կեանքի ծնունդն է. շուտ փոփոխւող և անկայուն, ինչպէս իրեն ծնող շրջապատը: Դա զուտ մարմնական, գերազանցօրէն մարմնական սէրն է,

որ աւելի պարզ հասկացուած է իւր իսկական անունով—հեշտասիրութիւն:

Մեծ և անվախճան սիրոյ երազները մի կողմ են նետուում: Այդպիսի բաձր սէր ընդգրկելու համար հարկաւոր է ունենալ ներդաշնակած հոգի, ներքին աշխարհը պիտի խռովայոյզ մտքերով, սրտի և բանականութեան հակադրութիւններով տակն ու վրայ եղած չլինի: Ժամանակակից ինտելիգենտ մարդու հոգին ըստ մեծի մասին անհաղորդ է մնում այդպիսի սիրուն: Զներդաշնակած հոգին, ինքնասէր և ինքնադժգոհ մարդու ալիքի ներքին աշխարհը բոլորովին այլ տեսակի ինքնամոռացութեան կարիք է դրում: Դա այն վեհ ինքնամոռացութիւնը է, որ ժխտում է անձնականութիւնն ինքնին, այլ մեծ, անվախճան սէրը ժխտող այն էգօրդմն է, որ որոնում է մարմնական հրապոյրների թովչանքը, իրրկ ափիոն—մի շմեցուցիչ դարման ներքին փոթորկումներն առժամապէս հանգստացնելու համար:

Մեր բանաստեղծն այդպիսով դառնում է մարմնի երգիչ: Նրա ոտանաւորների մէջ հանդէս է գալիս կինը իւր արտաքինով: Հոգեկանը, ներքին առանձնայատկութիւնը մեկդի է նետուում և սկսում է մի երկար, բայց միաժամանակ շնորհալի ներբող հեշտասիրութեան կրակին: Կնոջ սիրուն գէմքը, նրա նազուք շրթունքի մեղրը, թշերի կարմիր վարդերը, ծծերի շամամ հոտը, ապրշում մազերը, հուր ու վառ և ծով-ծով աչքերը, գեղանի կուրծքը, չքնաղ իրանը, բաց ճակատը, հեշտագին ժպիտը և ուրիշ գրգռիչ պլաստիքական թովչանքները դառնում են այն կենդրոնը, որի շուրջը համախմբուում է ինքնասէր մարդու երազայոյզ և կրքոտ երեակայութիւնը: Կնոջ ձեռքին գերի դառնալը ամե-

Նախորդոր երջանկութիւնն է դառնում: Ծերութիւնը, երիտասարդական ոյժերի մարումն ամենամեծ դժբախտութիւնն է համարում: Կեանքի ամբողջ քաղցրութիւնը կայտառ, երիտասարդական աշխոյժի մէջ է, երբ տղամարդը էգի աչքերին կարող է վստահ և շեշտակի նայել, ժամանակաւոր կապերն աւելի հրապուրիչ դարձնել, որովհետեւ՝ միեւնոյն է՝ ամեն ինչ անցողիկ է, «անսիրտ բնութեան մէջ» չկայ ոչինչ յաւելութեան: Մնում է միայն մի կիզիչ կարօտ, յաւիտենական վայելչութեան տենչը, չյագնաւու բուռն ցանկութիւնը, որ ստեղծում է վառած, բորբոքած միտքը, համոզւած որ կնոջ սիրտը խաբուսիկ է և փոփոխական, ինչպէս հարբուի ունեցող մարդու «մետաքսէ» թաշկինակները: Արեան կարճատեւ մի վրդովմունք, ախտաբորբ և խաբուսիկ տրփանք, անքուն և անգործ գիշերների սիրոյ արեցում, այրող ու մաշող կրքի բուռն փոթորկումներ — ահա այն բոլորը, ինչ որ առժամապէս լռեցնում է ինքնասէր և ինքնադժգոհ մարդու ներքին տակնուվրայութիւնը:

Սակայն առժամապէս միայն: Մտքմնի հրապոյրները չեն կշտացնում: Հեշտասիրութեան գգաւնքը կախարդում է՝ կարճատեւ պատրանքներ ծնելով միայն.

Արի իմ հոգեակ, իմ գիրկը արի,
Կախարդիր դու ինձ բոցոտ աչքերով.
Անուշ պատրանքով անցնի օր, տարի —
Եւ չը յագենամ քո համբոյներով:

Գլուխըս կուրծքիդ՝ վառ աչքիդ նայեմ,
Թող ինձ նախանձեն անմասններն երկնից.

Մի ժպտիդ համար ես կ'հրաժարեմ
Առանց զղջալու բոլոր աշխարհից:

Բանաստեղծը գիտի, որ կնոջ գրկում ինքը պիտի ողևորվի, բայց նա այդ ողևորութիւնը յարատեւ չի համարում, այլ վաղանցիկ մի «մոռացոնք», որ կը վերջանայ հէնց վայրկենապէս կամ այն ժամին, երբ կինը կամ կոյսը կսկսի մի ուրիշին «խաբել»: Բայց էլի հրապուրիչ է այդ խաբէութիւնը, որ ծնում է ոսկէ պատրանքներ:

Թէպէտ մինչ այսօր խաբւած եմ կեանքից,
Կարօտ տեսնելու մի անկեղծ գորով:

Եւ բնական է, որ անկեղծ գորովի բացակայութիւնը բանաստեղծի մէջ պիտի ծնի սրտի դատարկութիւն և պիտի աչքից կորցնի այն փարօսը, ուր անանց վայելքի երկինքն է փայլելում: Նա զգում է այնուհետեւ միայնութիւն և կեանքի տաղտուկը սկսում է ճնշել աւելի ու աւելի սաստիկ: Ծանր է այդ վիճակը, որովհետեւ բանաստեղծը միայնութիւնը համարում է մարդու ամենամեծ դժբախտութիւնը—յուսահատութեան և տրտմութեան աղբիւրը: Հեծեծանքը առաւել թունալի է դառնում, երբ չկայ ողբակից վշտի:

Այսպէս ուրեմն, հեշտասիրութիւնը չամօքից բանաստեղծի հոգին: Նրան չ'փրկեց այն հաւատքը, թէ ամեն ինչ անցողիկ է:

Ինչպէս պատրանքը հեշտասիրութեան,
Ինչպէս զրգիւրը պատանու արեան,
Նարուսիկ ժպիտն աշնան արեւու,
Բոլորը վաղն է անհետանալու:

Ի վերջոյ, բանաստեղծը մարմնապաշտութեան և հեշտասիրութեան հանդէպ ցոյց է տալիս պաղուծիւն և մի նոր, հոգեղէն սիրոյ կարօտ է սկսում գուրգուրել Սակայն, ի հարկէ, այդ հոգեղէն սէրն էլ պիտի հիասթափեցնի անպէս, ինչպէս որ մարմնականը, որովհետեւ մարմնի և հոգու անջատումը սիրոյ մէջ միշտ էլ ծնում է հիասթափութիւն և տանջանք.

Ինձ մի սիրիր... Թող ախտաւոր,
Մաշող սիրոյ փոխարէն
Մտերմութիւն մեզ բախտաւոր
Կապէ կապով բոցեղէն:

Այդօրինակ մտերմութիւնը չ'պիտի ներգաշնակի բանաստեղծի հոգին, քանի որ կին ասելով նա միայն մարմին է հասկանում, իսկ սէր ասելով—ախտաբորբոք հեշտանք: Նա քիչ առաջ կամեցաւ մտերմութեան կապերով միանալ կնոջ հետ, բայց միաժամանակ խոստովանում է.

Ծածուկ կիրքը ինձ պիտ տանջէ,
Նս չը կամիմ քեզ սիրել,
Բայց իմ սիրտը միշտ պիտ խնդրէ
Պնքոյդ սրտիդ մօտ լինել:

Այսպէս է ահա, որ հեշտասիրութիւնը դռնից դուրս է ձգւում և պատուհանով ընդունւում: Եւ դրա պատճառը ոչ միայն մարմնի և հոգու անջատումն է, այլ և Յովհաննիսեանի ստեղծագործութեան ընդհանուր էգօխստական բնոյթը: Էգօիզմը իւրաքանչիւր մարդու համարում է մի միջոց իւր սեփական անհատական շա-

հերի և նախատախնների իրագործման համար: Նրա համար ամեն մէկը ինքնանպատակ չէ և չի էլ կարող լինել այդպէս, որովհետեւ սոսկ միջոցի տեղ պիտի ճանաչէի և դործադրելու: Եւ բնական է այնուհետեւ, որ կիներ հանդէս դալով, սրպէս դուրգութեանքի և փայփայանքի ուսարկայ, պիտի ծառայի իրրեւ միջոց էգօխտի մարմնապաշտական նկատումներէ համար:

Յովհաննիսեանի սիրոյ երգերի մէջ կայ մի շատ հետաքրքրական գիծ: Դա բարձր սիրոյ և էգօխմի հակադրութիւնն է, որ նրա հոգին երբեմն երբեմն ապրում է, բայց ի վերջոյ յաղթանակը մնում է, ի հարկէ, մարմնապաշտութեան կամ հեշտասիրութեանը:

Ես քեզ սիրում եմ, սուրբ զեղեցկութեան
Անարատ հրեշտակ, տիպար մաքրութեան.
Սիրում եմ ոչ վառ աչերիդ համար,
Ուր ցոլանում է քո հոգին պայծառ,
Ոչ վարդ այտերիդ, նազուք շրթունքիդ,
Ուր ծաղկում է քաղցր երկնային ժպիտ...

Յովհաննիսեանն ուզում է փայտել իւր ստեղծից: Նա կնոջ մէջ չի ուզում մարմինը սիրած լինել, այլ «անմեղութիւնը», «ամբիծ հոգին», որ օտար է «աշխարհի արեղ ախտերին», լինելով «ջերմ», «անխարդախ սրտի» տէր:

Չի կարելի կասկածել բանաստեղծի անկեղծութեանը: Իրօք, նա հոգեղէն սիրոյ կարիքն է զգում: Բայց հէնց այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ նա ըմբոստանում է իւր հոգու տիրապետող բնոյթին: Այդ բնոյթը սիրոյ մէջ յաւէրժութիւն և անմահու-

Թիւն չի տեսնում: Եւ բնական է, որ անձնագորհու-
թիւնն էլ խորթ է այդօրինակ սիրուն: Ասպարէզը
մնում է բաց էզօխտական մարմնապաշտութեան
առաջ:

Հետաքրքրական է տեսնել Յովհաննիսեանի ժո-
ղովրդական մօտիւնները համոզւելու համար մեր ասա-
ծին և պնդածին: Ժամանակակից ինտելիգենտի մէջ
կայ ինչ որ հոգեբանական, աւելի ճիշտ՝ բնագիտական
հակում դէպի այն մեծ ամբողջը, որ ապրում է հողին
կապած, իւր աշխատանքի պայմաններին համապատաս-
խան աշխարհայեացքով և կենսահայեցողութեամբ: Բա-
նականութեան և սրտի հակադրութիւնը շեշտուն կեր-
պով չի հանդէս գալիս այդ մթնոլորդում: Կասկածանք-
ները, երբեմնները, սրտի զիջողականութիւնը մտքի
առաջ թոււմ է թէ բացակայում են այդտեղ: Խնտելիգենտ
հոգին, օփտւած ներքին անհամաձայնութիւններով և
կասկածոտ դիւրագոյացութեամբ, մի փոքր ազատ
շունչ է առնում՝ համակւելով ժողովրդական ապրում-
ների անկեղծութեամբ, անպաճոյճ յօրինւածքով և իւր
հոգուն խորթ նորութեամբ:

Ահա թէ ինչո՞ւ այնքան թարմութիւն և վսեմու-
թիւն ունին Յովհաննիսեանի այն ժողովրդական մօ-
տիւնները, որոնց մէջ նա սէր է երգում, ապրելով
մի այլ, օտար միջավայրի զգացողութիւններով: Նա
երգում է, օրինակ, զարբի սէրը, նրա տոչորանքները
սիրած էակի համար, սրտի անշէջ կրակը, եարի տես-
քին արժանանալու բուն կարօտը:

Էն ի՞նչ դուռ ա էն քարին...

Սիրտս կաթում ա արին,

Այ իմ թաղան, թե տաւր ինձ,
Թռնեմ, հասնեմ իմ հարին:

Թւում է, թէ Օսկաննիսեանն օժտւած է ըրողը
յատկութիւններով իսկական սիրոյ երգիչ լինելու: Եւ
իսկապէս. նրա մօտ սէրը, որքան էլ անցողիկ և փո-
փոխական գունաւորումով, ստանում է ոյժ մեր հոգին
ներգաշնակելու համար: Նրան տաղանդ է տրւած սէր
երգելու միայն: Սակայն, նրա ընդհանուր աշխարհա-
հայեցքը, աւելի ճիշտ՝ նրա հոգեկան կառուցածքը
զուտ ինքնասիրական ընոյթ ունենալով, չի կարողա-
նում անէանալ սիրոյ մէջ: Եւ այդ է պատճառը, որ նա
սիրուց աւելի բարձր գեղեցկութիւն համարում է կա-
րեկցութիւնը, որ ինքն ըստ ինքեան ընտրողում է նրա
սիրոյ ընոյթը—զուրկ անձնագոհութիւնից: Նրա կարեկ-
ցութիւնը և սէրը մի տախտակի վրայ են կանգնած:
Նա ոչ մի պայմանով չի ուզենայ հաւասարել նրան,
ում որ կարեկցում է, ճիշտ այնպէս, ինչպէս որ նա չի
անէանում սիրոյ մէջ՝ սէրը իւր անձի լրացումը չհա-
մարելով: Սիրոյ մէջ նա ինքնալրացում չի տեսնում.
այսինքն նա չի ընդունում, որ սիրածը կարող է ընդ-
լայնել իւր հոգին, պայծառացնել միտքը, խորացնել
զգացմունքը և գրդել մեծագործութիւնների՝ անձնագո-
հութեան միջոցով:

Այդ յատկութիւններով է օժտւած նաև նրա կա-
րեկցութիւնը:

Այսպիսով ոչ մի հակասութիւն չկայ նրա սիրոյ
և կարեկցութեան ապրումների միջև:

V.

Կ Ա Ր Ե Կ Յ Ո Ւ Թ Ե Ա Ն Ե Ր Պ Ե Ր

Ասացինք, որ Յովհաննիսեանի գեղեցիկը, նրա գեղարւեստական ներդաշնակութիւնը բաղկացած է երկու մասից—սէր և կարեկցութիւն: Միևնոյն ժամանակ պնդեցինք, որ ներքին տարաձայնութիւն չկայ նրա գեղեցկի այդ տարրեր մասերի միջև: Նրա սէրն է, որ պայմանաւորում է կամ, աւելի ճիշտ՝ հոգեբանօրէն հիմնաւորում է կարեկցութեան երգերը: Յետոյ՝ մի ուրիշ բան էլ ասացինք, որ Յովհաննիսեանը կարեկցութիւնը դասում է աւելի բարձր, քան սէրը:

Սկսենք այս վերջին կէտից:

Բանաստեղծն ինքն ևս զգում է, որ դուրս է գալիս իւր ներշնչման ու ոգևորութեան մի որոշ բնագաւառից և թևակոխում է մի այլ շրջան:

Եւ կատաղում ես, որ քո զգացմունքին,
Վեհ հոգուդ չկայ մի խօսք համակիր,
Յուսահատւում ես, որ քո քարոզին
Առաքելական՝ չունիս ուկնդիր:

Այժմ մեզ մնում է պարզել, թէ դա ի՞նչ զգացմունք է, որ մնում է անարձագանք բանաստեղծի շրջապատում: Դա ի՞նչ առաքելական քարոզ է, որ ուկնդիր

չի գտնում, և բանաստեղծը յոյսը դնում է միայն դա-
լոց սերնդի վրայ, որ պիտի գնահատի թէ այդ զգաց-
մունքը և թէ այդ քարոզը:

Յովհաննիսեանի էրը տեսանք, որ ինքնասիրու-
թիւնից և էգոիզմից է սկիզբն առնում: Կարեկցութեան
հրգերի մէջ հէնց ինքը Յովհաննիսեանն էլ այդպիսի
գնահատում է տալիս իւր սիրոյ զգացումին: Ի՞նչ է որ
սէրը: Նա մանր, կսական, անձնամոլ զգացմունք է: Նա
հանդէս է դալիս սեպհական երջանկութիւն, անհա-
տական ներքին, ինտիմ բարօրութիւն ստեղծելու հա-
մար: Սէրը լայն ընդգրկումներ չունի: Նա դատապար-
տում է մարդուն սահմանափակութեան, դարձնում է
գերի կրքերին և անցողական հաճոյքներին, հոգու ա-
ռաջ փակելով բարձր խոյանքների ճանապարհը, լայն
և ազատ ընդգրկումների հնարաւորութիւնը: Ի՞նչ նշա-
նշանակութիւն ունին սևորակ աչերը, շուշանադեզ
կուրծքը, մեղրածոյան շրթունքները, չքնադատեա իրա-
նը, մետաքսէ մաղերը, բաց ճակատն ու հեշտագին
ժպիտը, մի խօսքով՝ կնոջ վարդաբոյր ներկայութիւնը,
երբ...

Թօշնեցան ծաղկունքն իմ անոյշ երկրի,
Սառոյցը կապեց արիւնոտ վտակ.
Էլ պիտի ծաղկի՞ կուրծքը սաբերի,
Արդեօք կը տեսնեմ աղբիւրներն յստակ...

Երանի՜ մէկ էլ աչքս բանայի,
Նւ դու իմ շէն տուն, այժմ գերեզման,
Աւտարերիդ ես ընդունէի,
Լսէի օրհներգ քո վերածնութեան:

Այդ վշտի առաջ ի՞նչ է ներկայացնում սիրոյ վիշտը, երիտասարդական աշխոյժի անհետանալը և սիրած մարմնի դաւաճանութիւնը:

«Սիրոյ զւարճութեան մեղեդիներն ժամանակը չէ, ո՛վ անհոգ երգիչ»: Եւ այսպէս, սէրը պիտի լռի իբրեւ մի անվայել զգացում, որի հանդէս բերելն անգամ չարժէ, որովհետեւ նրանից աւելի բարձր զգացում պիտի խօսի—սէր դէպի մերձաւորը, հղբայրը...

Սէրը, այսպէս ասինք, սեռական հակումը միայն բերում է խնդում, զւարճութիւն, անհոգ վիճակ: Այդ բոլորը պէտք է մեկդի վանել, երբ խօսք է բացւում կարեկցութեան մասին: «Գարնան ցնծալից հին մեղեդին» պէտք է թաղել և սկսել համազգալ ուրիշներին՝ նրանց լքումի և յուսահատութեան մէջ, միանալ նրանց լացին և հառաչանքին:

Եւ խօսում եմ ես. բայց էլ չի հնչում

Գարնան ցնծալից իմ հին մեղեդին...

Ես էլ միայն կոծում, միայն հառաչում—

Իմ լացն եմ խառնում ընդհանուր ողբին:

Ի՞նչէ պատահել: Բանաստեղծը գտել է, որ մարդկանց մէջ գոյութիւն ունի մի սոսկալի չարիք: Մարդը մարդու յօշոտում է, մարդկանց մէջ բացակայում է հանրական սէրը: Այդ հանգամանքն է գլխաւոր պատճառը, որ աշխարհը դարձել է տառապանքի մի հովիտ. ուժեղի բռունցքն է իշխում և հլու, հպատակ նախիրը քշւում է դէպի սպանդանոց: Բայց միթէ դա է մարդու կոչումը: Ոչ և ո՛չ, Բանաստեղծը գիտէ, որ Յիսուս Քրիստոս այլ բան է քարոզել: Եւ նա միշտ վշտանում

է, որ Փրկչի քարոզը չեն իրագործում մարդիկ, չեն սիրում միմեանց, ձեռք ձեռքի չեն տալիս արութեան գործեր կատարելու ի փառս համօրէն բարօրութեան.

Միշտ վշտացած մտածում եմ—

Ո՞ւր է սէրը մարդերի,

Որ Փրկիչը սուրբ կտակով

Մարդկութեանը աւանդեց,

Խաչի վրայ իւր արիւնով

Գիր կենդանի դրոշմեց:

Այո, Փրկչի քարոզը մարդկանց չարգելեց չարիքներ գործել, բռնութիւններ յօրինել: Քրիստոնէական բարձր սկզբունքները արգելք չհանդիսացան տիրապետողների համար շղթաներ կռելու ոսկուց և երկաթից, կաշկանդելու մարդկանց ազատ կամքն ու ձգտումները դէպի լոյս և ազատութիւն: Շատ տխուր է այդ կացութիւնը: Բանաստեղծը յաճախ է մտածել այդ բոլորի մասին: Եղիլ են բողոքներ, երբ նա անիծել է թէ իրեն, որ այդ բոլորը տեսնում է, և ամբողջ աշխարհը, որ այդ բոլորը գործում է: Եւ որքան անիծեալ է այդ աշխարհը: Երբեմն նա ուզում է բանաստեղծին վարակել իւր վատ—վատ բաներով: Օրինակ, լինում է բողոք բանաստեղծն իրեն հարց է տալիս: ԶԷ որ աշխարհը վատ է և վատերն են նրա մէջ յաջողում: Արի, ես էլ նրանց ճանապարհը բռնեմ: Այսինքն բիրտ ոյժով կամ ստորաքարշ շողոքորթութեամբ հաշտեմ մարդկանց հետ, ոսկու դէղեր կիտեմ և պատւաւոր անուն ու հռչակ ստանամ: Բայց չէ, դա լուր բան չէ: Բանաստեղծը ոչ փայլ է ուզում, ոչ փող: Նա ուրիշ բան է կամենում լինել

Իմ հոգու ձայնին ես հաւատում եմ,
 Եւ աղքատութեան ու երգի համար
 Ես եմ դրօշակն ահա պարզում եմ—
 Եւ այսուհետեւ հաւատա պայծառ:

Բանաստեղծի մէջ քրիստոնէական սէրն է խօսում: «Սիրեցէք միմեանց», Նա աւետարանական սիրոյ կողմնակից է: Վաստակեալների և բեռնաւորների ծանր կացութիւնը իւր փայլաշաւիղի առարկան է դարձնում, ինչպէս Գրիստոնէական եկեղեցին: Նա կարեկցում է թշուառներին: Աշխարհի մէջ տեսնում է միայն և եթ սիրոյ բացակայութիւն և տանջանքի մի հովիտ է նրան պատկերանում մարդկանց առօրեայ նիստ ու կացը: Աշխարհը լի է հազար ու մի ախտերով, թէ արտաքուստ և թէ ներքուստ, մարդս կորցրել է Աստծու պատկերը: Անիրաւութիւն, յափշտակութիւն, զզւելի յարձակումներ այն բոլորի վրայ, ինչ որ սուրբ և վեհ է մարդու մէջ: Ուրացութիւն, տգիտութիւն, ազատութեան պատկերի իսպառ խորտակում:

Այո, մեր բանաստեղծը թշուառների բարեկամն է, աւետարանական սիրոյ առաքեալը, նրան համակել է կարեկցութեան զգացմունքը: Նա ձեռքը մեկնում է իւր մերձաւորին և հաւատացնում է, որ իւր ձեռքը «բարեկամ է լքեալ թշուառին»: Նա ուզում է ամօքել իւր մերձաւորի ծանր վիշտը:

Եւ ցաւակցութեան այրող արցունքով
 Տանջանքիդ այդ կուռ շղթան կործանեմ,
 Գուցէ և սիրոյ դիւթական շողով
 Մի բոպէ ես քեզ հանգիստ պարգևեմ...

Թշուառութիւնը, զրկանքներ յարուցանող ճակատադիրը հազարալեզու հրդեհի նման իւր բորբոքած հնոցի մէջ զոհեր է ոչնչացնում. անբախտութիւնն է վիճակի եւ դրանց.

Եւ դոցա համար ես սէր եմ պահում,
Այդ ճակատադրի խորթ որդոց համար,
Որոնց առաջին զուռը չէ բանում
Միսիթարութեան քարասիրտ աշխարհ...

Էլ ժամանակը չէ անձնական, սեռական սիրոյ մասին մտածելու: Բանաստեղծը չի կարող ամբողջովին անձնատուր լինել այդպիսի նեղ, էգոիստական սիրոյ տարփանքներին: Նա չի կարող սիրել այն վարդ—աղջկան, որի թշին—ի հարկէ, վարդաբոյր թշին—արցունքի մի շիթ չէ կաթել իսպառ և նրա շրթունքին—ի հարկէ, մեղրակաթ շրթունքին—միշտ անպակաս է ժպիտը—ի հարկէ, հեշտագին ժպիտը: Բանաստեղծը ոչ մի գործ չունի այդպիսի անհոգ արարածի հետ: Նա ջարդւած սրտերի դառն հառաչանքներին է ուղնդրում, նենգաւոր բախտից զրկւածին փայփայել ձգտում: Նա կողմնակից է այն բոլորին, ովքեր յաղթւած են ոսկեգօծ հրկաթէ բազկից, «որպէս մի ճըճի»: Նա դնում է այնտեղ...

Ուր միայն մէկի ծառն հրջանկութեան
Բուսնում է տասի աւերակներից,
Ուր մի ժպիտը ծաղկում է միայն
Հարիւրաւորի աղի արցունքից...

Աշխարհը տգեղ է, շատ ու շատ տգեղ, Երգիչն

արդէն խնդալու ոչ մի հակում չունի այդ տգեղութիւն-
ների հանդէպ: Նա միայն ողբալ գիտէ և դառնացած
հոգով նդովել աշխարհի վատ կարգերը: Աշխարհը փըր-
կելու համար նա մինչև անգամ հակառակ չէ թշուա-
ների դրութիւնը բարւոքելու մի կարճ ճանապարհ
ցոյց տալ: Որ բարեգործութիւնն է, ձեռքի լուծան
թշուաին բաշխելը: Երգիչը աւատարանական ոգով է
տոգորւած և կարդում է իւր «լիբան քարոզը»...

Երանի նրան որ շնորհք ունի
Սիրել անձնէր և անկեղծ սրտով,
Սրբել քրտինքը վաստակաւորի
Եւ տառապեալին խնամել փութով.
Եւ երկրպագու Փրկչի սուրբ խօսքին
Անտրտունջ բաշխէ իւր ձեռի լուծան,
Եւ կարեկցարար արհամարհւածին
Բաց անէ դուռը մխիթարութեան...

Սակայն բանաստեղծը ցաւով նկատում է, որ իւր
լիբան քարոզը արձագանք չի գտնում մարդկանց սրտի
մէջ և նրանք շարունակում են իրենց առօրեայ կեանքը,
կարծես թէ ոչ մի առաքելական քարոզ չեն էլ լսիլ:
Աւատարանական սիրոյ բարձր պահանջները մոռտք չեն
գործում մարդկանց քարացած սրտերի մէջ: Ապառաժ
և անապատ—անհ նրանց հոգու մակդիրները: Ի՞նչ կա-
րող է բանաստեղծն անել այդ մարդկանց: Ոչինչ, Բայց
չէ. մի բան կարող է անել. նա. աղօթում է այդ չար
մարդկանց հոգիների փրկութեան համար իւր «Աղօթք»
ոտանաւորի մէջ.

Բայց մարդիկ վաղուց մոռցած Բո խրատ.
 Դահիճ են դարձել եղբարցն հարազատ.
 Ուրացած անմահ խօսքըդ մարդասէր
 Հզօրն աշխւ ըհին դարձել է արդ տէր.
 Եւ փոքրը հունի այլ ևս բերան
 Կարդալ սաղմոսը Բո օրհներգութեան:

Բանաստեղծն երբէք չպէտք է յուսահատուի մարդկանց քար անտարբերութեան հանդէպ: Նա պէտք է երգի և իւր անկեղծ զգացումներով տոգորի բրիստոնէական կարեկցութեան թշնամիներին: Նա մշտապէս պէտք է իրեն առաջնորդ ընտրի Եսայի մարգարէի հետեակ խօսքերը. «Սովորեցէք բարութիւն անել, որոնեցէք իրաւունք, ուղղութիւն ցուցէք զրկւածին, որբի դատը տեսէք, որբեայրու դատը պաշտպանեցեք»: Երգչի սեկեռակ դադափարն այդ պիտի լինի: Նա չպէտք է թոյլ տայ, որ իւր քնարը պատից կախւած մնայ և տարիքը ժանգով նրան պատեն: Ոսկի լարերին նա միշտ պիտի դարկի, ոգեորւած և խնդաղին, և լարերը դարձեալ կհնչեն զւարթ.

Թող հնչեն նորից հին երգը անմահ
 Եւ վառեն սիրով սրտերը մարդկան,
 Թող նոքա նորից օրհներգեն անահ
 Դործերը բարւոյ և կարեկցութեան:

Մարդկանց սրտերի մէջ սէր չկայ, այո: Նրանք չարիքներ են գործում միմեանց հանդէպ, երես են թեքած բարութեան գործերից և ոտնակոխ են անում միմեանց առանց կարեկցութեան և խղճահարութեան:

Բանաստեղծը շատ յոռետես է աշխարհի և մարդկանց վարք ու բարքի դիմաց: Յովհաննիսեանի զգացմունքների շարքը բաւականաչափ մօտ է այն զգացումներին որ Եղիշէ պատմագիրը դնում է Ղևոնդ Երէցի բերանը. «Ո՛չ ահա ամենայն լի են ախտիւք. է որ ի ներքոյ, և է որ արտաքոյ. ցուրտ և տօթ, քաղց և ծարաւ և ամհնայն աղքատութիւն կարօտութեան: Արտաքոյ՝ անիրաւութիւն, յափշտակութիւն, գէճ պղծութիւն անառակ յարձակմամբ. ի ներքոյ ամբարշտութիւն, ուրացութիւն, տգիտութիւն, անդարձ մոլութիւն ի կամաւոր ազատութենէն»:

Բանաստեղծը ոչ միայն յոռետես է մարդկանց հասարակական կացութեան հանդէպ, այլ և ոչ մի մխիթարական բան չէ տեսնում, երբ մարդու կեանքի անցողական և շուտանցիկ լինելը համեմատում է բնութեան հետ.

Ո՛հ, այսպէս ողջ մեր կեանքն է վաղտնցիկ,
Ողջը լոկ ծաղր է անսիրտ բնութեան.
Եւ սէր, և հրճանք, համայն գեղեցիկ
Ձոհ է աւերի և մոռացութեան:

Ճիշտ այնպէս, ինչպէս նա սիրոյ բնագաւառում հիասթափւեց, այդպէս էլ կարեկցութեան բաժնում մխիթարական ոչինչ չէ տեսնում, թէպէտև մերթ յոյս է տալիս իրեն, ասելով՝ թէ ձմեռը չի կարող շքեղ, ծաղկաբոյր գարնան գալուստն արգելել, ուրեմն և անմիտ չարութիւնը չի կարող խափանել «ճշմարիտ խօսքը»...

Կարեկցութեան երգերի մէջ էլ, ինչպէս և սիրոյ

ներգերում, բանաստեղծը իւր հոգին թարմացնում է ժողովրդի խորքերը նայելով: Այն սէրն ու դուրսը՝ բանքը, որ բանաստեղծն ուզում էր տեսնել մարդկանց մէջ, բայց չէր տեսնում, կաթողին վերաբերմունքը, որ պիտի համակէր մարդկանց փոխադարձ համակրանքներով—այդ բոլորը նա փոխադրում է մի այլ աշխարհ, աշխատանքի մարդկանց շրջանը, ուր նա տեսնում է և սիրադին, և անձնէր վերաբերմունք: Այդ կողմից մի հոյակապ դոհար է «Հատիկ» ոտանաւորը: Ի՞նչ քնքոյշ, փափուկ և սիրառատ դրացումներ է տածում գիւղացին դէպի իւր «սիրուն հատիկը»—դէպի իւր դարդի ընկերը, որ նրա կեանքի միջիթարիչը պիտի լինի: Կրօնական յուզումները որքան ներդաշնակ կերպով կապւած են գիւղացու աշխատանքի պայմաններին.

Եւ ջերմ աղօթքով Տիրամօր առջև
Ես մոմ կը վառեմ, ես խունկ կը ծխեմ,
Որ քեզ պարգևէ մի առատ անձրև,
Որ քեզ միշտ սիրով նայէ խնդադէմ:

Բայց թէ այդ շնորհին մեղքերիս համար
Արժանի չլինեմ, ծով կը դարձնեմ
Ես տաք քրտինքը ճակատիս արևառ
Որ քեզ, իմ հատիկ, ծարաւ չը թողնեմ:

Եւ ահա այն ժամանակ, երբ հատիկը կծլի և կ'կանաչի, երբ ոսկէ սաւանով կ'ծածկւի հասուն արողը և թեթե քամուց կ'ծածանւի, գիւղացու ջարդւած սիրտըն էլ հանգստեան քնով կանդորդանայ արտի անուշ շրշիւնի փափուքներով և դարդը կթաղւի անհեռ գետնի տակ:

Ինչպէս սիրոյ երգերի մէջ, այնպէս էլ կարեկցութեան երգերում, Յովհաննիսեանի հոգու մենաւորութիւնը ոչնչով չի լցւում. նա մնում է նոյն ինքնասէրը։ Եւ բնական է, որ այդպէս էլ պիտի լինէր։ Այն բոլոր մարդիկ, որոնց կարեկցում է բանաստեղծը՝ կատարելատիպ չեն հանդիսանում նրա համար, ճիշտ այնպէս, ինչպէս որ նա իւր սիրածին կատարելատիպ չի համարում, այլ ամեն բոլորէ կասկածում է նրա զգացմունքի անկեղծութեանը։

Եւ շատ ճիշտ կերպով Յովհաննիսեանը տւել է իւր կարեկցութեանը քրիստոնէական բնոյթ։ Իսկ յայտնի է, որ քրիստոնէութիւնն իւր երկրամերժ վարդապետութեամբ չէ հաւատում մարդկանց երկրային ապագային, ուրեմն և նրա համար մերձաւորի սէրը մի սանդուղք չէ դէպի կատարելութիւն, այլ ընդհակառակը մի անցում դէպի հանդերձեալ աշխարհը— դէպի մահ։ Այլ ևս ի՞նչ սէր... Կեցցէ էգօիզմը։

VI

Ռ Ա Ջ Մ Ի Ե Ր Ք Ե Ր

Մինչև այստեղ մենք զործ ունէինք մի բանաստեղծի հետ, որ տաղանդաւոր կերպով երգում էր իւր հոգու յոյզերը և գրաւում էր մեզ իւր անկեղծութեամբ և ոգևորութեամբ: Մենք տեսանք Յովհաննիսիանին գեղապէտի կոչումը երգելիս, և ասացինք, որ նա շնորհալի կերպով է ըմբռնում գեղարւեստական ստեղծագործութեան էութիւնն ու արժէքը, խորիմաստ և քանքարաւոր ներքնատեսութեամբ է բաժանում գեղարւեստական գեղեցկի և առօրէականութեան աշխարհները: Այդ բոլոր ժամանակ նրա մէջ խօսում էր ներշնչումը, նա երգում էր ազատ և անկաշկանդ՝ որպէս մեր նոր բանաստեղծների նահապետ և հին, «հրապարակախօսական բանաստեղծութիւնների» շրջանը փակող մեղանում:

Մենք տեսանք Յովհաննիսեանի գեղեցիկը: Ասացինք, որ նա միայն և եթ սիրոյ և կարեկցութեան երգիչ է: Մենք կարող ենք սիրոյ և կարեկցութեան մասին այլ հայեացք ունենալ, քան ինքը Յովհաննիսեանը, բայց մի բան չենք կարող առանց այլ և այլի չափել. այդ այն է, որ նա տաղանդաւոր կերպով է երգում իւր սէրն ու կարեկցութիւնը: Որքան էլ գիտակցաբար

մենք հակառակ լինենք նրա սիրոյ և կարեկցութեանը
ընդունումներին, այնուամենայնիւ, երբ մեր մէջ լուռւմ են
գիտակցութիւնն ու մեր աշխարհայեացքը և հանդէս է
բացւում մեր զուտ ինտելիգենտային ներքին, ինտիմ,
անգիտակցական աշխարհի համար—մենք չենք կարող
չտոգորւել Յովհաննիսեանի նւագներով, որոնց մէջ նա
դրել է խանդ և անիւն, ոգևորութիւն և ներշնչում։
Նա մեզ վարակում է իւր ոգևորութեամբ, երբ սէր է
երգում, որքան էլ մենք գիտակցաբար սէր ասելով
մարմնապաշտութիւն չհասկանանք։ Նա մեզ վարակում
է իւր կարեկցութեան երգերով, որքան էլ մենք կա-
րեկցութիւնն այն ճանապարհը չհամարենք, որով պէտք
է ընթանայ մարդկային զարգացումը դէպի բարձր կա-
տարելութիւն։ Հէնց այդ է գեղեցկի օբիեկտիւ, առար-
կայական արժէքը։ Նա մեզ վարակում է մեր գիտակ-
ցական պնդումների հակառակ։ Որքան ևս բարձրանում
է, հարկաւ, գեղեցիկը մեր աչքում, երբ նա ոչ միայն
կազմակերպում է մեր անգիտակցական աշխարհը, այլ
և հաշտում և ներդաշնակում է մեր գիտակցութեան,
աշխարհայեացքի պահանջներին...

Յովհաննիսեանը տաղանդաւոր երգիչ է, երբ նա
երգում է գեղազէտի կոչումը, երբ նա երգում է իւր
սէրն ու կարեկցութիւնը։

Բայց... բայց անհրաժեշտ է մեր առաջ մի ըո-
լորովին ուրոյն աշխարհ։ Բանաստեղծը մեզ ոչնչով չի
նախապատրաստել այդ աշխարհը մտցնելու համար։

Ի՞նչ աշխարհ է դա։

Յովհաննիսեանի տաղանդի և գեղեցկի տեսակէ-
տով մի անհարազատ և խորթ աշխարհ։ Մի մթնոլորդ,
որի մէջ խամրում է մեր բանաստեղծի ստեղծագոր-

ծութեան ծաղիկը: Թողած իւր գեղեցկի—սիրոյ և կարեկցութեան բնազաւատը, նա թեւակոխում է մի ուրիշ շրջան, ուր ստեղծագործել չի կարող, գեղարւեստական ներգաշնակութիւն յօրի՜լ անդօր է, և աօրէականութեան սարուկն է դառնում շինծու, մտածածին, դատողական ու խրատական ոտանաւորներ սարքողի դիւրում:

Մարդ ցաւում է, անկեղծօրէն ցաւում է բանաստեղծի համար: Եւ անբռնադատ կերպով ձեռք պաշարում է մի խորին ցասում դէպի բանաստեղծի շեղումը իւր իսկական ճանապարհից և ուղում էք նրա երեսն ի վեր պոռալ: Ինչ գործ ունիք այս քարքարոտ արահետներում, յարգելի բանաստեղծ, երբ քայլել չէք կարողանում և ամեն ըստէ սայթաքում էք գեղարւեստական բարձունքներից դէպի քարոզչի, սառն դատողութիւններով մտածող դաստիարակի սահմանափակ հովիտները, ուր փոթորկայոյզ ապրումներ չկան, այլ խրատական շարլօններ, ճիշդ ու աղողակ՝ առանց անկեղծ ներշնչման և ոգևորութեան:

Մենք տեսանք Յովհաննիսեանի հոգին, քնքոյշ, փափուկ զգացումների երգչին: Նա երգում էր սէր.— Կոյսի հրապոյրները, նրա պարզեւած անցողիկ թովչանքները: Բանաստեղծի սիրոյ երգերում աստղերի շողեր չէին պլպլում, նա իւր սիրածի մէջ չէր անէանում և անմահութեան ու յաւերժութեան գործօն չէր դարձնում իւր սէրը: Բայց այն չափով, ինչ չափով անկեղծ էր իւր ապրումների անպաճոյճ հիւսւածքով, կրկնում ենք, մենք յարգում էինք սիրոյ երգիչ Յովհաննիսեանին:

Մենք տեսանք Յովհաննիսեանի քնքոյշ ու փափուկ հոգին, երբ քրիստոնէական կարեկցութեամբ

Թաթաղուն երգեր էր հնչեցնում, երբ աւետարանական սիրոյ ներքոյ էր կարդում իւր մերձաւորի և եղբօր հասցէին: Նրա կարեկցութեան երգերը լայն ընդգրկումներ չունէին, մերձաւորը բանաստեղծի համար կատարելատիպ չէր, որի մէջ նա կարողանար անէացնել իւր ինքնասէր հոգին՝ անմահութեան և յաւերժութեան ճանապարհն ընտրելով: Բայց այնուամենայնիւ մենք հաշուեցինք և կարեկցութեան երգերի հետ, որ չափով անկեղծութիւնն էր դրած նրանց հիմքում, որ չափով նրանք ներդաշնակւում էին բանաստեղծի սիրոյ երգերի հետ. սիրոյ էգօիզմը և մերձաւորին սիրելը միմեանց պայմանաւորող ապրումներ են ծնում. ոչ կնոջ մէջ է նա անէանում, ոչ մերձաւորի, նա մնում է իւր ինքնասիրութեամբ անմատչելի և մենաւոր, վերջ ի վերջոյ հիասթափւում է թէ կնոջ և թէ մերձաւորի մէջ և յոռետեսութիւնն է նրան պաշարում բնականօրէն:

Յովհաննիսեանի յոռետեսութիւնն էլ բարձր դրոշմ չունի իւր վրայ: Ծագելով էգօիստ մարդու հոգուց, այդ յոռետեսութիւնը լայն ընդգրկումներ չունի, քչով բաւականացող է և այսօրւայ մարդու համար իդէալ չի կարող դառնալ: Տէք Յովհաննիսեանին նրա ուզած մի քանի բաները և այդ յոռետեսութիւնը մէջ տեղից կվիրանայ: Տէք նրան պատանեկական աշխոյժ և երիտասարդութիւն՝ նորից անցողիկ սիրոյ վայելքները հնձելու համար — և նա սիրոյ մէջ կդառնայ լաւատես, որովհետև նա բարձր պահանջներ չի դնում սիրոյ զպացումի առաջ: Թող նա իւր շրջանում տեսնի մարդկանց, որոնք քրիստոնէաբար ձեռքի լուծան բաշխում են մերձաւորին, սիրում են այդ մերձաւորին հէնց նրան սիրած լինելու համար՝ առանց մի որևէ բարձր նպա-

տակի մարմնացում տեսնելու այդ մերձաւորի մէջ — և ահա բանաստեղծի կարեկցութեան երգերի մէջ ևս կհնչի լաւատեսութեան ներքողը և հեռու կքշւի յոռետեսութիւնը իր սահմանափակ պահանջկոտութեամբ ու զօրմից բղխող յոռետեսութիւնը աւելի բարձր թռիչքներ չի էլ կարող ունենալ. այս բաժնում ևս Յովհաննիսեանը հաւատարիմ է մնում իւր պսիխիկայի թելադրութիւններին և ոչ մի կեղծ շեշտ չի հնչեւում նրա քնարի լարերի մէջ...

Այսպիսով մեզ համար լիակատար կերպով պարզւեց Յովհաննիսեանի ստեղծագործութեան ընդթը. նա երգում է բանաստեղծի կոչումը, անցողիկ սէր ու կարեկցութիւն դէպի մերձաւորը և այն չափով, ինչ չափով չի անէանում սիրոյ և կարեկցութեան մէջ, նա յոռետես է. բայց որովհետեւ այդ յոռետեսութիւնը էզոիզմից է բխում, ուստի և չունի իւր մէջ անծնագործութեան տարերք և նրան խորթ է անհունութեան և յաւերժութեան հետ ծուլելու խանդավառութիւնը. նա մնում է ամենուրեք ինքնասէր:

Իսկապէս, այստեղ էլ մենք պէտք է վերջակէտ դնէինք և աւարտէինք մեր գրածքը Յովհաննիսեան — գեղադէտի մասին:

Բայց տարաբախտաբար բանաստեղծը մեզ զրկել է այդ բաւականութիւնից՝ իւր ստեղծագործութեան մէջ տեղ տալով այնպիսի ոտանաւորներին, որոնք գալիս են ազճատելու նրա գեղարւեստական շէնքի ամբողջականութիւնը:

Նա չի բաւականացել ընական, անկեղծ և ոգևորութեամբ շնչած երգեր գրելով, այլ և տւել է արհեստական, շինծու, բռնապրօսիկ և ասոն մտածութիւններով յօրինւած քարոզներ:

Որքան էլ մեղ համար առ հարկի և ակամայից,
բայց և այնպէս մենք պիտի ապացուցանենք մեր խօս-
քերի ճշտութիւնը:

* * *

Երբ Յովհաննիսեանը երգեց իւր խսկական և
ինքնաբուրդի նւագները, նա ոչ մի տեղ իւր ինքնա-
սիրութիւնը չաղարտեց անձնազոհութեան, հոգեկան և
ֆիզիքական ինքնամոռացութեան ապրումներով: Մենք
այդ բոլորը գտանք բնական և հաշտեցինք նրա տա-
ղանդի և գեղեցկի հետ՝ անկեղծութիւն և ոգևորու-
թիւն տեսնելով ամենուրեք:

Այժմ մեզ համար բացւում է նրա նոր երգերի
շարքը, լսում է մի խլացուցիչ ռազմական կանչը-
տուք — անձնազոհութիւն հայրենիքի համար և ապագայ
հայրենիքի, ազատ հայ աշխարհի արեամբ մկրտած
կազմակերպութիւնը:

Հետաքրքրական է թէ ի՞նչով է պայմանաւորում
ինքը բանաստեղծը իւր այդ ցատկումը բնական աշ-
խարհից դէպի արհեստականը, շնորհալիից դէպի ան-
շնորքութիւն:

Մի հրաշալի գիշեր, երբ բնութիւնը քնքոյշ երա-
զով խաղաղ քնի մէջ հանգստանալիս է լինում. երբ
վառած լուսինը պայծառ երկնքից սիրահար աչքով
երկրին է նայելիս լինում. երբ իւր անուշիկ բոյրը
վարդը պարգևելիս է լինում այրած սոխակին — հէնց
մի այսպիսի գիշեր մեր բանաստեղծը իւր մանուկ

սիրտը զոհ է բերում նենգաւոր կոյսին, դրանից յետոյ տարիներ են անցնում, բայց բանաստեղծի տանջւած հոգին այնուհետեւ ոչ մի հանգիստ չի տեսնում:

Եւ հիմա մուսաս այսպիսի գիշեր
Երևում է ինձ փուշ պսակ գլխին,
Եւ երգում եմ հո քո կուռ շղթաներ,
Ստորակ հայրենիք, իմ մայր տխրագին...

Բաւական հետաքրքրական խոստովանութիւն.

Պառաւած աղջկերք և տիկնայք կան, որոնք հիասթափւում են իրենց անհատական կեանքի մէջ և ընտրում են հասարակական գործունէութեան ուղին՝ ոչ թէ որեւէ կոչում զգալով իրենց մէջ, ոչ թէ ներշնչում և ոգևորութիւն իրենց մէջ պարփակելով, այլ անգործութեան շնորհիւ, և անհամ ու դատարկ կեանքի մէջ որեւէ ազդնելու մտադրութեամբ:

Կան բանաստեղծներ, որոնք չեն բաւականանում իրենցից իրենց շնորհւած գեղեցկի շրջանակով, այլ թեւակոխում են մի ուրիշ մթնոլորդ, ուր նրանք ստեղծագործել չեն կարող, որովհետեւ զրկւած են ներշնչումից և ոգևորութիւնից:

Նրանք փշրում են իրենց քնարը և կոկորդ են պատառում՝ ոչ մի հաճոյք չ'զգալով իրենց նոր առաքելութեան մէջ: Բանաստեղծ Յովհաննիսեանն ևս կարևոր է համարել իւր քնարը փշրելու, ռազմական երգեր շինելու և հայրենիքի փրկութեան բէցէպոսներ գրելու:

Ես կը փշրեմ քնարն ոսկի,
Թէ որ նորա լարերից

Երջանկութեան ուրախ երգի
Թռչեն ձայներ ոգելից:

Մենք պիտ ողբանք, մինչև բացւի
Անամպ երկինք նոր գարնան,
Սուրբ հայրենեաց նորոգ կեանքի
Մկրտութեան Յորդանան...

Այդ Յորդանանի մէջ մկրտւելով՝ տաղանդաւոր բանաստեղծ Յովհաննիսեանը դառնում է պրօզայիկ, սեթևեթ քարոզների մարդարէ: Յովհաննիսեանը օժտւած էր բոլոր հնարաւորութիւններով ոտանաւորներ յերիւրոդ և թխող չ'դառնալու, ինչպէս «հրապարակախօս – բանաստեղծները»...

Քնարը փշրելուց յետոյ բանաստեղծի դրութիւնը չափազանց վատթարանում է, այնուհետև ինչ որ երգում է՝ արհեստականութեան շունչ ունին և չեն համակում ու տոգորում մեր հոգին գեղարուեստական յոյզերով:

Կռիւ է այս կեանքն, և այդ կռիւ մէջ
Որքան անպատրաստ, տկար մեր ոյժեր.
Բայց մենք զնում ենք մի յուսով անվերջ
Եւ չունենք ոչինչ մենք այլ քաջալեր:

Ինչո՞ւ յանգերի և վանկերի տակ է դրւել այս պրօզան, մենք հրաժարւում ենք հասկանալ: Մեզ համար միայն մի բան պարզ է, որ քարոզիչ Յովհաննիսեանը չափազանց ձանձրալի է, նրա դատողութիւնները յօրանջ են շարժում և ոչինչ լաւ բանի պէտք չեն կարող դալ:

կուզէի հնչէր իմ փողն ահարկու,
 Թնդացնէր սրտեր իւր ձայնով հուժկու,
 Քնածը դարձնէր, թոյլն արիանար
 կուէիու ցմւ : սուրբ գործի համար:

Մենք գրաւ կ'գանք, որ այս քառեակը դրած է
 միայն «ահարկու» և «հուժկու» բառերը միմեանց
 հանդէպ դնելու համար, որովհետեւ այդ բառերը յիշեալ
 զասաւորութեամբ բաւական աղմուկ են հանուս...

Մենք գրաւ կ'գանք, որ բոլոր «առիթներով»
 դրած ոտանաւորների մէջ երևում է Յովհաննիսեանի
 սոսկ հայոց լեզուից հմուտ լինելը, բայց ոչ նրա քան-
 քարը, որ թաղւել է այն ժամանակ, երբ նա դարձել
 է զանազան տօների և առօրեայ կանչւումների
 երգիչ:

Նւ միշտ էլ այդպիսի օրերն աւելի
 Մտածել են տալիս, թէ որքան է պակաս
 Մեզ հոգու զօրութիւն, թէ ինչպէս երկրի
 Ոյժն է մեզ քաշում դէպի վայր հանապազ:

Նւ այդ տղայական բռնայանքն ու բռնակարգը
 շինել է այն բանաստեղծը, որ կերտել է «Հատիկ» և
 «Ալադեազ բարձր սարին» գոհարները! Նւ այդ բոլորը
 շինւել է այն բանից յետոյ, երբ բանաստեղծը թողել
 է իւր գեղեցիկ բնագաւառը և դնացիլ է կուէիու և
 արիւն թափելու այն ժամանակ, երբ ոչ այդ կուի մէջ
 է ներշնչում դրել և ոչ էլ այդ արիւնն է ոգևորու-
 թեամբ ոռոգել:

Միրոյ զւարճութեան մեղեդիների
 Ժամանակը չէ, ով անհոգ երգիչ,
 Դուրս եկ ասպարէզ մահառիթ կուի,
 Թունով թաթախւած ան կարող գրիչ:

Այո, բանաստեղծը դուրս եկաւ այդ խորթ ասպարէզը, նրա խնկական գրիչը կոտրեց և թունով թաթախւած նոր գրիչը չափազանց անկարող և ապիկար հանդիսացաւ որևէ հոգեթով բան ստեղծելու:

Նա երգեց անարգ վիճակին արիւնով վերջ տալու քարոզներ, նա երգեց զինուորի արիւնոտ կուրծքը և նրա անձնագոհութիւնը, երգեց ազնիւ մարտ բռնութեան դէմ: Բայց այդ բոլորի մէջ պակասում էր այն, ինչ որ գեղարւեստական է դարձնում որևէ խօսք, — անկեղծ ու անպաճոյճ, նոր և ինքնարուղիս ապրումներ...

Եթէ Գամառ-Քաթիպան կարողացաւ ստեղծել իւր գեղեցիկ «Մայր Արաքսի»ն, պատճառն այն էր, որ նա ապրում էր իւր հայրենիքի վիճակը, նա տոգորւած և ներշնչւած էր հայ ազգի քաղաքական կացութեամբ, նրա ապագայի յոյսերով և ներկայի տառապանքներով: Նրան գեղարւեստական տաղանդ չէր տրւած, նա հրապարակախօս էր, բայց ազգի հրապարակախօս, ազգի երգիչ էլ պիտի նա դառնար, եթէ հնար լինէր որևէ տաղանդաւոր բանաստեղծական երկ ստեղծել: «Արաքսի արտասուքը» հէնց այդպիսի մի տաղանդաւոր բանաստեղծական գործ է, ուր չկան ռազմական գոռոցներ և հայի վիշտը երգւում է մեղմ և թախծալի շեշտերով առանց մարտական ընցեպտներ

և ազատագրական կռի մտացածին ծրագիրները*)

Ճիշտ այնպէս, ինչպէս որ դէպի Շահազիզն է որոշել իւր վերաբերմունքը, այնպէս էլ Յովհաննիսեանը գրել է Գամառ-Քաթիպայի մասին:

Պ. Մ. Բարխուդարեանը պատմում է հետեւեալը. «1836 թւականն է: Նոր Նախիջևանը պատրաստութիւն է տեսնում ազգային մեծ բանաստեղծ Գամառ-Քաթիպայի յօրելեանը տօնելու: Մոսկւայի հայ ուսանողների Գրականական Ընկերութիւն և ազգային մեծ բանաստեղծի յօրելեան, ինչպէս կարող էր չ'մասնակցել այն երգչի յօրելեանին, որ տասնեակ տարիների ընթացքում սերունդներ էր կրթել, ոգի ներշնչել, եւ ահա Գրականական Ընկերութիւնը ժողով է կազմում խորհրդակցելու, թէ ինչ ձևով մասնակցէ յօրելեանին: Մտքերի փոխանակութիւնից յետոյ որոշեցաւ հէնց այդտեղ մի ուղերձ գրելու, ջանք լաւ յայտնի է, որ հաւաքական ոյժերով մի բան գրելը համարեա միշտ ժամավաճառութիւն է լինում, և այդ ժամավաճառութեան միջոցին Յովհաննիսեանը մի քանի բողբոջ հեռացաւ, յետոյ եկաւ և ասաց թէ ուղերձը պատրաստ է: Նա կարգաց իւր գրած բանաստեղծութիւնը... Ոտանաւորը բուռն ծափահարութեամբ ընդունեցաւ: Այժմ ես աւելի հակած եմ կարծելու, որ այդ ծափահարութիւնը այնքան զնահատութեան արտայայտութիւն չէր, որքան շնորհապատութեան, որ նա ամենքիս ազատեց ուղերձ գրելու բեռից»:

*) Տես Գամառ-Քաթիպայի և Ս. Չահազիզի մասին մեր յօդածները Բ. Իշխանեանի «Հասարակական գաղափարների» առիթով («Հորիզոն» 1910, օգոստոս և հոկտեմբեր):

Ինչպէս տեսնում էք, «Գամառ-Քաթիպային» խորագիրը կրող ոտանաւորը զրական պատւէրի արդիւնք է: Մի ուրիշ անգամ էլ գրել է Յովհաննիսեանը Գ.-Քաթիպայի մասին: Երբ էջմիածնում կանգնեցրին նրա յուշարձանը, բանաստեղծ Յովհաննիսեանը մի ոտանաւոր կարդաց «Ռ. Պատկանեանի յիշատակին»:

Յովհաննիսեանը այդ երկու ոտանաւորի մէջ էլ գիտակ է այն բանին, որ Գամառ-Քաթիպան քարոզիչ է եղել, սուրբ գործի, այսինքն հայ ազատագրութեան մարտիկ է հանդիսացել, «անվեհեր մի մարտի զօղանջում էր գոռ կոչնակ» նրա երգերում:

Իբրև մարտիկ շղթաներ թէ խորտակել չկարաց,
Ազատ կեանքի մարգարէ դարձաւ իւր խեղճ հայրենեաց,
Եւ բռնութեան թշնամի, ստրուկ եղբօրն ախոյեան՝
Ազատ երգով պանծալի փակից շրթունքն յաւիտեան:

Յովհաննիսեանը իւր ոգևորութեամբ և ներշնչումով ոչ մի կապ, ոչ մի առնչութիւն չունի Գամառ-Քաթիպայի հետ: Եւ բնական է, որ նրա մասին մեր բանաստեղծը կարող էր գրել միայն այն ժամանակ, երբ հոգեբանօրէն հարկադրւած պիտի զգար որևէ բան գրել՝ պատւէր ստացած լինելով ներքուստ թէ արտաքուստ: Բայց, ի հարկէ, մենք չենք ժխտում, որ պրօզայիկ դատողութիւններով խօսող Յովհաննիսեանի և Գամառ-Քաթիպայի միջև նմանութիւն կայ. երբ Յովհաննիսեանը թողնում է իւր գեղեցկի բնագաւառը և թեկնոյթում է ռազմի երգերի և ազատ հայրենիքի գաղափարի շրջանը, նա դառնում է մի նոր Գամառ-Քաթիպա առանց տաղանդի, դառնում է աւելի ան-

շնորք, քան «աղլի երգիչը», որովհետև վերջնիս հոգուն անհարազատ չէին այն բոլորը, ինչ որ նա երգում էր և երբեմն երբեմն արտասուք քամում ղիւրաղդաց հոգիների մէջ:

Յովհաննիսեանի հայրենասիրական և ազգական քնարը այդպիսի ոյժ չունի, որովհետև Յովհաննիսեանը ոգևորութիւն և ներշնչում չի դնում իւր երգածների մէջ: Կարեկցութեան և սիրոյ էգօիզմի երգիչը չի կարող տաղանդաւոր կերպով ազգական երգեր հնչեցնել, որովհետև անձնագոհութիւնը նա հոգեբանօրէն ժըխտում է, իսկ հասարակական սէրը առանց անձնադոհութեան—անմտածելի է, ուրեմն և տղեղ... Մայր Արաքսի վիշտը գեղարւեստական պատկերացում ստացաւ Գամառ-Քաթիպայի զրչի տակ, որովհետև այդ վիշտը կտրել էր քունը նրա աչերից, իւր հոգու մէջ նա զգում էր այդ վիշտը, որպէս սիպհական, հարազատ մորմոք և մրմուռ: Նա անէանում էր այդ վշտի մէջ, սիպհական «եսը» զոհում այդ վշտին և Արաքսի ալիքների հետ խառնում իւր աղեկէզ արցունքները անկեղծ, անպաճոյճ և նոր ապրումների դրոշմով...

Յովհաննիսեանը Վարդանանց տօնին մտածել է «նոր Աւարայր» ստեղծելու հանգամանքների մասին:

Դիւցազանց ոգին մոռցւած դամբանից
Յարութիւն առած մեզ շունչ է տւել,
Եւ նոր Աւարայր մեր խորունկ քնից
Զարթնած դիմում ենք կուռ և մեռնել...

Մի ուրիշ անգամ Յովհաննիսեանը մտածել է

ոտքի կանգնեցնել հայերին աղատագրական կուխ համար:

Ոտքի ել, հոգիս, շղթադ թօթափիր,
Աչքըդ բաց արա այդ մահաւան քնից,
Թէև մահամերձ, դու մի ձայն հանիր—
Որդիքդ օգնութեան կըգան չորս կողմից:

Ի՞նչի համար պիտի հաւաքւեն այդ որդիները:
Ուրիշ խօսքով՝ ազատ հայրենիքի վաղափարը ի՞նչ
երանգաւորումով է հանդէս գալիս Յովհաննիսեանի
համար:

Եւ արցունքով համբուրէիք սուրբ շիրիմ,
Ուխտ կապէիք նորից խաչով ու սրով
Կանգնեցնել նոր Արտաշատ, Խոխոցիմ,
Վերջ տալ անարգ այս վիճակին արիւնով...

Միջնադարեան հոտ է փչում այս իդէալից. պարզ
երևում է, որ այդ ոտանաւորը թելադրած է հրապա-
րակախօս—Յովհաննիսեանի պահպանողական գիտակ-
ցութեան բովարանից:

Կոյսի և կարեկցութեան երգիչը դառնում է խա-
չի և սրի դաշնակցութեան հրապարակախօս՝ ի հարկէ,
խաչի գլխաւորութեամբ և գերազանցութեամբ սրի
հանդէպ—նոր Խոխոցիմի կամ էջմիածնի հովանու
տակ...

Ծրւած հօտի դու ժողովող անքոյթ փարախ,
Հաստատ լինի թող մեզ վրայ քո հովանին.

Գրիգորի սուրբ օրհնութեամբ ծաղկիր խաղաղ,
Փառք, ապաւէն մեր աննման, էջմիածին:

Փառք... և անկում է՝ լոյս և կարեկցութեան երդչին:
Շատ երերուն և խղճուկ մի բան է ներկայաց-
նում հրապարակախօս Յովհաննիսեանի հասարակական
խղէալը. նա մերթ հանդէս է գալիս իբրև արիւնի,
հասարակական յեղաշրջումների ջատագով, մերթ դառ-
նում է աւետարանական քնքշասիրտ առաքեալ, որ
զղւում է թէ այդ արիւնից և թէ այդ ըմբոստ տակ-
նուլրայութիւնից: Նրա մէջ վերջ ի վերջոյ այն գիծն
է յաղթանակում, որ ծաղրում է ռազմականութիւնը և
հաշտութիւն է քարոզում «սիրեցէք միմեանց» նշա-
նաբանով, այդ կերպ մօտենալով իւր կարեկցութեան
երգերի ոգուն:

Եւ այս օրերում, երբ մենք անխաբդախ
Կարօտ ենք սիրոյ, կարօտ հաշտութեան,
Երբ մենք միմեանցից աներկբայ, անվախ,
Իրար պիտի մեկնենք բազուկ միութեան,

Մեր ատելութեան սառոյցն հալցնել
Կարող է միայն այն սիրոյ կրակ,
Որ այս կրճքի մէջ Աստուած է վառել,
Առաքելութեան որպէս սուրբ կտակ:

Այս անհամ, չափից դուրս անհամ տողերը վրւած
են 1895 թւին... Ո՞ւր պիտի հասնի Յովհաննիսեանի
հասարակական խղէալի նաւը, եթէ նրա ռազմական
երգերը այդքան ողորմելի վախճան ունեցան: Ի՞նչ
յոյս է փայփայում հրապարակախօս Յովհաննիսեանի

գիտակցութիւնը, եթէ նա մի անգամ ընդ միշտ փակում է իւր գեղեցկի ուղին: — Վանական հրապարակախօսութիւն...

Եթէ այդ հրապարակախօսութիւնը չափազանց ազատամիտ էլ լինէր, ինչպէս ասել ենք այս գրեւծքի ներածութեան մէջ, դարձեալ մեզ համար գրօշի արժէք չ'պիտի ունենար, որովհետեւ բանաստեղծը հրապարակախօսութիւն չ'պիտի անէր և չ'պիտի թաղէր իւր գեղեցիկը՝ զօհիլով նրան գեղարւեստի հետ կապ չունեցող զարտուղի նպատակների և միտումների...



Ռազմական երգերն անյաջող բաներ դուրս եկան: Այստեղ հետաքրքրական է նկատել, որ Յովհաննիսեանին անպայմանօրէն յաջողում է սիմվօլիք ձևով երգել ազատութեան գաղափարը, որպէս իւր կարեկցութեան երգերի մի կողմնակի լրացում: Բայց միևնոյն ժամանակ պիտի նկատենք, որ բանաստեղծի գեղեցկի սահմաններն այդտեղ մի տեսակ ճարճատելով են թոյլ տալիս ազատութեան երգերի մոտքը: Եւ դա շատ բնական է: Յովհաննիսեանը խորհրդապաշտ, սիմվօլիք բանաստեղծ չէ. նա կօնկրէտ իրերի և երևոյթների շրջանում է ապրում և նրան անմատչելի են իւրերի խորքում այլ և այլ խորհուրդներ փնտրելու և գտնելու յատկութիւնը: Բնական է, որ ազատութեան գաղափարը սիմվօլիք ձևակերպութեամբ նրա մօտ դուրս է գալիս անորոշ ու տարտամ և ուժեղ, հոգե-

դրաւ թափ չունի, ինչպէս սիրոյ և զեղեցիկութեան նւագայնութիւնը:

Այդ տեսակէտից զրաւիչ է «Արտաւազդ» ոտանաւորը: Յաջող է այդ բնաստեղծութիւնը նրա համար, որ հրապարակախօսական համոզմունքներ չի արտայայտում, այլ «սուրբ սիրոյ», «նոր կեանքի», «զեղեցիկ օրերի», «հաշտ երկնքի» սիմվոլներով է զեղուն:

Հեղիկ կարկաչով վազում են ալիքները, փարելով և փայփայելով կանաչ ափեր, նրանց հետ խօսում են ջրերի վրայ կախւած լալահառաչ ուռնինները:

Մի վազէք, ալիք, կացէք կոհակներ,
 Մի թողնէք չքնաղ այս վայրն հանգստեան
 Եւ վայելեցէք քաղցրութեան ժամեր
 Մինչ ժպտում է ձեզ շողն արեգական:

Երբ որ այս բլուրը կանցնեն ալիքները, կ'սլըդատուի նրանց վճիտ ջուրը, նրանք պիտի դրկեն այլ երկիր, այլ տխուր ափեր, արիւնով ներկւելով:

Բայց... մռայլեցաւ երեսը գետին.
 «Իմ քոյր, եղբայրն են այն ակն ու վտակ»—
 Գոչեց, զարկւեցաւ սարսափ ափերին
 Ու յառաջ անցաւ կոհակ առ կոհակ:

Որքան ուզում էք, մտածեցէք և դուք անվերջօրէն կ'մտածէք, բանաստեղծի այդ պատկերի տակ հաղարաւոր ապրումներ դնելով: Հէնց զեղարւեստական երկի արժանիքն է դա. հրապարակախօսական երգերի

մէջ Յովհաննիսեանին պակասում էր ապրումների այդ անվերջանալիութիւնն ընկալին մեր ձեռքը տալու կարողութիւնը:

Գեղեցիկ է «Սարն ի վերը», որքան հմայիչ պատկերներ ունի այդ ոտանաւորը, որքան խոհերի դռներ է նա բաց անում: Պիտի լսել այդ ոտանաւորը 12—13 տարեկան աշակերտների բերանում խմբովին ասելիս համոզւելու համար թէ ի՞նչ հոյակապ բան է դա: Բայց դրա մէջ ոչ մի կօնկրէտ համոզում, ոչ մի գաղափարական սխեմա չկայ: Այդ ոտանաւորը գրաւիչ է իւր խորհրդապաշտ անորոշութեամբ: Ո՞ւր է գնում բանաստեղծը, դա ի՞նչ սար է, որ ուզում է նա բարձրանալ՝ յոգնեցնելով իւր բազուկները: Այդ ի՞նչ սև ժայռեր են, այդ ի՞նչ ահաւոր անդունդ է, ի՞նչի համար է բնութեան դէմ պայքարի ելել այդ զինւորը:

Աւելի կարծրանան թող այս սև ժայռեր,
Աւելի թող սպառնայ անդունդն ահաւոր,
Դեռ շունչ կայ բերանումս, շարժւում են ձեռքեր—
Դէպի վեր, սարն ի վեր, հով արի զինւոր:

Դեռ հեռու է կատարն անամպ ու յստակ,
Բայց եթէ չը հասնենք ափսոսող մենք այսօր,
Վաղն ափսոսող ենք անշուշտ, մերն է յաղթանակ—
Դէպի վեր, սարն ի վեր, անվեհեր զինւոր:

Ի՞նչ նմանութիւն այս գեղեցիկ տողերի և ազատագրական այն կանչւոտութի միջև, որ ափսպէս աղմկում էր Յովհաննիսեանի ռազմի երգերում և օդը սղոցում կաջնէ... հարւածներով՝ մեր հոգուն չ'պարզեւելով ոչինչ գեղարուեստական հաճոյք և բաւականութիւն:

Եւ եկաւ Թռչունն իմ հայրենի տան—
 Լալաճայն ողջոյն առայ նորանից.
 Ա՛խ, ողբով եկար, կռուեակ սիրական,
 Եւ անջատուեցրէ ողբով ինձանից:

Յովհաննիսեանին յաջողութեամբ հն, ահա, այդօրինակ
 մեղմ ապրումները, նրան շնորք չի տրւած աղատա-
 դրական պայքարի նշանակներ տալու Շատ շատ, եթէ
 նա ուզում է իւր գեղեցկի—կարեկցութեան և սիրոյ
 շրջանից դուրս գալ, նա պիտի դօր տայ սիմվօլիզմին
 և նրա ոտանաւորներին տասից մէկը յաջող դուրս կը
 գայ, որովհետեւ, ինչպէս ասացինք, նա սիմվօլիստ չէ
 իւր տաղանդի ընդթով և գեղեցկի հոգեբանութեամբ:

Բայց, ի հարկէ, լաւագոյնը այն կ'լինէր, որ Յով-
 հաննիսեանը իսկի իւր գեղեցկի շրջանից դուրս չգար.
 և մնար միայն և եթ այն, ինչ որ է ի բնէ:

Եւ քո ականջին միշտ սիրոյ երգեր
 Մենք արշալուսից կասենք մինչ աստղեր,
 Եւ քեզ կ'փաբենք և քո ծեր կուրծքին
 Մենք հանգչել կ'տանք մեր քաղցր կրքին...

VII.

ԵԶՐԱԿԱՅ ՈՒԹԻՒՆՆԵՐ

Այս գրածքի ներածութեան մէջ մենք շեշտեցինք, որ «զուտ գեղարւեստի քուրմերը» կեանքից կտրւած մի երևոյթ չեն ներկայացնում. նրանց ներշնչման աղբիւրը և ոգևորութեան նպատակը կեանքն է և ոչինչ մարդկային խորթ չէ նրանց:

Այդ ամենը ճիշտ է և Յովհաննիսեանի նկատմամբ. նրա պօէզիան՝ իր ինքնութեան, անհատապաշտութեան բարձունքներով իսկ՝ արձագանք է կեանքի, ծնունդ ուրոյն պայմանների և առանց վերջիններիս վերլուծման անըմբռնելի կ'մնայ:

Յովհաննիսեանը ներկայ կեանքի տաղանդաւոր երգիչն է:

Ո՞րտեղից է բղխում նրա ինքնութեան պաշտամունքը:

Ժամանակակից կեանքը, գոյութեան արդի կռիւը շատ ու շատ առիթներ է տալիս ինքնութեան որոշակի ապրումների փթթման և զարգացման համար: Ամեն ինչ որոշ կաղապարի տակ դնել, կենսական երևոյթների արտաքինը, շարքը գնահատել առանց խորունկ ներքինն ի նկատի առնելու, մարդկային հոգու անկեղծ, անբռնադատ և ինտիմ ապրումներն արհամարհել՝ ամեն ինչ չափելով և վերածելով հնչուն արժէքների,—այս բոլորն անշուշտ առաջացնում և ծնում են

ինքնութեան ըմբոստացումը կաշկանդիչ, տափակեցնող և հոտայնութեան շարլօնների դէմ:

«Կեղծաւոր դարձ կոչումը յստակօրէն բնորոշ է ներկայիս համար: Ամեն մէկը խնամքով ծածկում, թաղցնում է ինքն իրեն և հանդէս է բերում այն ամենն, ինչ որ բոլորանւէր յատկանիշ չէ իւր ներքին էութեանը, այլ սարբւած է հաճոյանալու, քծնելու և կեանքի մէջ տաքուկ ազատտան ստեղծելու համար:

Կեղծիկ հոգու մտերմական ապրումները կեանքի մէջ յաջողելու նպատակով, ծածկել այն բոլորը, ինչ որ հետաքրքրական է և բնորոշ, չի ենթարկւում ոչ մի շարլօնի և արտաքին նպատակայարմարութեան, թաղցնել ծանրաթախիծ գիշերւան խոր յուզումները անպատկառ, մակերեսային և նհնդոտ ցիւրեկից, ազատագլուխով մի սահմանափակ կղզիացման մէջ՝ զոհ չը դառնալու համար կաշկանդիչ սեղմիչներին — դրամի և բռնութեան որոգայթներին, — այս բոլորն ահա մի ուրոյն ինքնութեան ծնունդին են նպաստում և իւրաքանչիւրին հնար բնձեռնում ինքնամիտփւելու, կտրւելու դրսի աշխարհից, խորթ շրջապատից և խորասուզւելու ինքն իւր մէջ:

«Եւ ինքն իր մէջ դեռ արցունքին անձրևումը կը զգայ»...

Ինքնութիւնն իւր բարգաւաճման և զարգացման գազաթնակէտին է հասնում մեղչանական աշխարհում, որ միշտ խօսում է ամենատեսակ ազատութիւնների մասին և հնար չի տալիս ոչ մի իսկական ազատութեան փթթումին:

Ամենատեսակ ազատութեան այդ դրախտի մէջ է, որ ինքնութիւնը հասում է յաճախ յուսահատ ծայ-

րայիդուլթեան, ստանալով ախտաւոր և դարչելի կերպարանք, Արևին ձգտող մատաղ տունկերը ծովունում են և տգեղանում՝ կենսասպան պաղուլթեան մէջ և արեւթաքոյց ստւերների տակ: Որքան մատաղ ոյժեր թօշնում են դեռ չ'ըացւած կեանքի ցուրտ և կաշկանդիչ պայմանների մէջ: Մեղչանակաւ ազատութիւնը դրամի և արշինի ազատութիւն բերեց և հոգու վսեմ թռիչքները անարեւելիցին հնչուն արժէքների հանդէպ:

Ամեն տեսակ ինքնուրոյնութիւն, բոլորի հարթ ճամբան չընտրող ամեն մի ինքնութիւն վտարւեցան տիրող կարգերի կողմից. և ինքնութիւնն ու ինքնուրոյնութեան տենչանքները ստացան անհրապոյր և դժխեմ ձևակերպութիւն՝ հանդէս գալով էգօիզմի և անձնապաշտութեան ծայրայիդուլթիւններով:

Մանաւանդ սիրոյ կամ՝ աւելի ճիշտ, սեռական խնդրում առաւել ևս նկատելի է ժամանակակից ինքնութեան տարօրինակ կենսահայեցողութիւնը:

Մարմնապաշտութիւնը դարձաւ այն միակ վայրը, ուր կաշկանդւած ինքնութիւնը կարող էր ազատօրէն արտայայտւել առանց կեղծիքի և ինքնաբռնադատումների:

Եւ իրօք, մարմնի պաշտամունքը, կանացիական անցողիկ թովչանքների ջատագովումն ու շահեցումը սնունդ են քաղում ժամանակակից ինքնութեան մղձաւանջների մէջ:

Կենսական սեղմիչ շարլօնների տակ հեծող և թանչող մարդը ինքն իրեն գտնում է մարմնական, գերազանցօրէն մարմնական սիրոյ բնագաւառում:

Տարերային, անգիտակցական յոյզերը ըմբօստօրէն կարտում են ամենատեսակ կապանքներ և հտնգոյցներ՝

մարմնի թովչանքների ծնած խելայեղութեան հրապոյրների միջոցին:

Ազատ ու խիզախ ելք են տալիս մարդուն հրքին աշխարհին սիրոյ արեւցման արբշիւ տւայտանքները, երբ մարդը և կայ, և չկայ, հայ, որպէս կամեցող և տենչացող, չկայ, որպէս գիտակցող և մտածող:

Գիտակցութիւնն ու մտածութիւնը լետարգիական քնոյ են մատնւում և ասպարէզ է բացւում հոգու տարերային վիճակների համար: Խնքնութիւնը դառնում է ինքն իրեն, բայց ազաւաղած դրութեան մէջ—մահկանացուն յուռնում է և աստուածայինը սպանւում մարդու մէջ:

Խնքնութիւնը հանդէս է գալիս, որպէս ճղճիմ էգօիզմ, որ թռիչքներ ու խոյանքներ չունի և հովիտները գերադասում է երկնակապոյտ բարձունքներից, ստորոտները—ամպածրար վերերից...

Մարդկանց հոգիները փակւում են միմեանց հանդէպ և ամեն մէկն ինքնամփոփւում է՝ չինական պարիսպների քաշելով իւր շուրջը: Այդ սահմանափակութեան մէջ մանրանում է ամեն վեհութիւն: Մեր շուրջն ամեն ինչ փոփոխւում է առասպելական արագութեամբ, մեր հոգու մէջ էլ ամեն ինչ վաղանցիկ է դառնում և անյարատւ:

Սէրը կորցնում է իւր գերազոյն յատկութիւնը, դադարում է լինել անմահութեան և յաւերժութեան գործօնը և անձնագոհութեան մղում լինելու ներքնատեսութիւնը:

Ամեն ինչ ստանում է փոփոխականի, մանրութեան և ինքնամփոփման կերպարանք:

Մարդը հանդէս է գալիս մեր աչքում յարգանք վայելելու իւր հէնց այդ յատկութիւններով:

Մարդը յարգելի է, եթէ նրա մէջ չկայ ոչինչ ֆիայուն և յաւէրժական, եթէ նա հեղնում է անմահութիւնը և նւաճում է մի փոքրիկ անկիւն իւր նոյնքան փոքրիկ գոյութիւնը մի կերպ պատսպարելու համար:

Մարդը յարգելի է, եթէ նրա զգացմունքը մանր է իւր կենսական հորիզոնի չափ, եթէ նրա միտքը սահմանափակ է, կաշկանդւած տիրոջների ընկերով, նրանց կուլտուրական արժէքներով. եթէ նրա կամեցողութիւնը տատանւում է բարիի և չարի միջև, համակերպւում է մէկին կամ միւսին ըստ հանգամանաց:

Այդպիսի մարդուն, որ հոգով աղքատ է և ապիկար, զգացմունքը մակերեսային, միտքը—կղզիացած և կամքը—երերուն, այդպիսի մարդուն փրկելու համար կարեկցութեան ներրոգն է ստեղծւած, որ դարձեալ ինքնութեան դրոշմն ունի իւր վրայ, այն ինքնութեան, որ ժխտում է անմահութիւնն ու յաւէրժութիւնը՝ մարդու կենսական սահմանափակութեան մէջ տեսնելով սկիզբը և վերջը...

Յովհաննիսեանը սիրոյ և կարեկցութեան երգիչ է:

Նրա պօէզիայի վրայ ժամանակակից կեանքը դրել է իւր շունչը. և եթէ այդ կեանքի խորունկ ազդակները մեզ համար պարզ չ'լինեն, նրա քնարի գեղգեղանքներն էլ կ'մնան ըստ ամենայնի առեղծւածային:

Յովհաննիսեանը իւր ժամանակի տիրող արժէքներն է ներբողել և չ'բաւականալով իւր գեղարուեստական ձիրքի տւեալներով, ձեռն է առել հրապարակախօսի գրիչը և իբրև քաղաքացի ջատագովել իւր նման քաղաքացիների իդէալներն ու առօրէական տենչանքները:

Պիտի ցաւել, ի հարկէ, այդ շեղումի համար:
 Բայց հրապարակասութիւնն էլ չի փրկել նրա ին-
 քնութեան կենսահայեցողութիւնը էգօրստական բնոյ-
 թից: Եւ նա այդտեղ էլ մնացել է նոյնը—անձնագո-
 հութեան ժխտողը յանու: անցողիկ արժէքներէ, որոնք
 չեն փրկում նրա հոգին մենակութեան մղձաւանջից և
 մի ինքնայատուկ յոռետեսութիւնից: Յոռետեսութիւն,
 որ ոչ մի սղասելիք չունի վերջ ի վերջոյ ոչ կեանքից
 նրա մարմնապաշտութեամբ և կարեկցութեամբ հան-
 դերձ, ոչ ընութիւնից՝ նրա անսիրտ և խիստ անտար-
 բերութեամբ և ոչ իրենից, բանաստեղծից, որ զգում
 է միայն և եթ ձերութեան վերահասը:

Կանցնեն շուտ տարիք, և դու կը վռնուիս.

Ձըկայ եռանդըդ պատանեկութեան,

Եւ նախկին կրքեր այլ ևս չունիս,

Եւ չէ տրոփում բոցով սրբազան

Քո մաշւած սիրտը, աչերըդ մարած

Ձէ վառում հուրը մանուկ արտասւաց,

Եւ միայն վերջին փոթորկից առաջ

Լսւում է ջարդւած կրծքիդ թոյլ հառաչ:

Ձի կարելի չ'հաւատալ բանաստեղծի անկեղծու-
 թեանը: Եւ իսկապէս մի խորունկ անկեղծութիւն է
 բուրում նրա թէ յոռետեսութիւնից, թէ սիրուց և թէ
 կարեկցութիւնից: Հաւատալի դէպքում նա իսկի տա-
 ղանդաւոր գեղադէտ էլ չէր լինի, որ հէնց էն գլխից
 դէիլ է մի հոյակապ ճանապարհ դէպի մարդկանց հո-
 գինները իւր երգերի անկեղծ, պարզ և նոր յատկու-
 թիւններով:

Ասի՛ ա չէզ, առ չունգուրդ, մեզ բան ասան
սրտալի,
Կարօտ ենք քու անուշ ձէնին, մի բան ա
սրտալի.
Սրտի խօսք ենք ուզում քեզնից, որ վեր հա
մեր հոգին—
Առ չունգուրդ, առ լարերին, կրակ վատի
մեր սրտում,
Մեզ ամենիս նոր շունչ առող մի բան ասան
սրտալի:

1912 թ. Փետրւար
Երևան



6125

